Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 152 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 4 ՅՈՒԼԻՍ 1884 (Ն. Տ.) 16 ՅՈՒԼԻՍ — 23 ՌԱՄԱԶԱՆ 1301

ՊԱՅՄԱՆՔ

Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 ղուրուշ. երկու անգամի համար 2 ղուրուշ է. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կըլլայ։

Օրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն պէտք է ուղղել

«Առ խմբագրութիւն ԱՐԵՒԵԼՔ օրագրի».

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. Գալաթիա, Նորատունկեան խան. Իսկ գաւառներէն հետեւեալ հասցէիւ

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده { ارەولك }

غزته‌سى اداره‌سنه

40 ՓԱՐԱ

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ	համար	Տարեկան	դահեկան	արծաթ	200
»	»	Վեցամսեայ	»	»	100
»	»	Եռամսեայ	»	»	50
»	»	Ամսական	»	»	20
»	»	Հատով	»	»	1
Գաւառաց	համար	Տարեկան	»	»	240
»	»	Վեցամսեայ	»	»	120
»	»	Եռամսեայ	»	»	60
Օտար	երկիրներ	Տարեկան	Ֆրանք		56
»	»	Վեցամսեայ	»		28

Դուրս զրկուած լրագրոց ծախքը խմբագրութեան վրայ է.

40 ՓԱՐԱ

Կ. ՊՈԼԻՍ
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 4 ՅՈՒԼԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՅՈՒԼԻՍ 14 Ի ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԸ Ի ՖՐԱՆՍԱ

Այս երկուշաբթի, 2/14 Յուլիս, բոլոր Ֆրանսա և ֆրանսական գաղթականութիւնք կատարեցին «Ազգային տօնն»։ Ի՞նչ է այս ազգային տօն, որո՞ւ և ինչ բանի յիշատակն յաւերժացնել և նուիրագործել կ'ուզեն աղով։ — Մեր ընթերցողաց մէջ կան շատեր որք այդ մասին յստակ գաղափար մը չունին։ Այս քանի մը տողերու նպատակը պիտի լինի պատասխանել այդ հարցման։ Հանդիսին նկարագրութիւնն յետոյ կը հրատարակենք, երբ բերեն Բարիզի թերթերը։

Յուլիսի 14րդ օրն 1789 ի ֆրանսական Յեղափոխութեան մեծ օրերէն մին եղաւ։ Կրնանք ըսել թէ առաջին մեծ օրն եղաւ. որովհետեւ նոյն օրն էր որ ժողովուրդն, իւր ձեռքն առնելով իշխանութիւնը, բռնի ոյժով կործանեց հաստատութիւն մը, — Պասթիյլի բերդն ու պետական բանտն, — որ բռնապետական դրութեան մը չջնջուելի գլխաւոր երեւոյթն էր։ Յուլիսի 14րդ օրը տօնելով, ֆրանսական ազգը կը տօնէ իւր մեծագոյն Յեղափոխութիւն, որ ազատութեան դարագլուխը բացաւ Ֆրանսայի համար, և հանրապետական սկզբանց հիմը դրաւ։

1774ին Ֆրանսայի արքայական գահը նստաւ Լուի ԺԶ., հազիւ քսան ամեայ։ Ֆրանսա քաղաքական, ընկերային, տնտեսական, վարչային և զինուորական տեսութեամբ խոնարհագոյն վիճակի մը ենթարկուած էր այս թուականիս, և այդ աննախանձելի վիճակ քանի գնաց ծանրացաւ, մինչեւ որ ժողովրդային զայրոյթը պայթեցաւ 1789ին։ Կառավարութեան իշխանութիւնք անսահման էին։ Սահմանադրութիւն մը չի կար. քմահաճոյքը տիրող դրութիւն էր։ Արքունեաց և ազնուական դասու շռայլութիւնք երկրին կենսական հիւթը կը սպառէին։ Վարչային կազմակերպութիւնն յոռի էր, և կեդրոնական ու գաւառական վարչութիւնք ժողովրդային բարգաւաճումն արգիլելու քան քաջալերելու կերպով կը գործէին։ Դատաստանական կազմակերպութիւնը Բաբելոնի աշտարակը կը նմանէր։ Դատական արդարութիւնն անհաւասար էր և կաշառաբեկ, և ընդհանրապէս խիստ անողոք։ Պատիժներն արդարութեամբ չէին տրուեր, և բարբարոսական ժամանակներէ մնացած խստութիւններ ունէին։ Տուրքերը ծանր էին, լաւ բաշխուած չէին, կը գանձէին Տէրութեան Գանձուն վնասաբեր եղանակներով, և ըստ ամենայնի անհամաձայն էին տնտեսագիտական ամենապարզ գաղափարաց։ Արքունի տիկնայք, — իրարու յաջորդող Լուիներու սարփածուհիներն — երեւելի պաշտօնեից հետ խօսք մէկ ընելով, կը կողոպտէին Գանձը։ Թիւրկոյի պէս տնտեսագէտ մը և Նէքէրի պէս ելմտագէտ մը ջանքերն Արքունեաց կողմէ ընդդիմութեան կը բախէին։ Կառավարութեան վարկը փճացած էր։ Պետական պարտքերը կը դիզուէին տարուէ տարի միլիոններու բարդմամբ։ Ժողովրդեան հարստացուն մասն, առանձնաշնորհմանց շնորհիւ, չէր մասնակցեր հանրային ծախուց։ Ազնուականութիւնն ու Կղերն երկու առանձին դասեր էին, որք ապա հարկի շնորհները կը վայելէին։ Երրորդ դասն էր հասարակ ժողովուրդն։ Երբեմն զինուորական ծառայութիւնն ազնուականաց մենաշնորհն էր, քարոզութիւնք, ուսմունք և առաքինութիւնք՝ Կղերին։ Բայց Ազնուականութիւնն և Կղերն ապականեալ էին արդ։ Ազնուականաց մէջ այլ եւս չկային մեծ զօրապետներ, ոչ ալ կղերին մէջ՝ Պօսիւէներ և Ֆենըլոններ։ Զինուորական ծառայութիւնն Ազնուականութեան և ուսմունք և առաքինութիւնք Կղերին մենաշնորհը լինելէ դադրած էին, իսկ ժողովուրդն, — Երրորդ Դասակարգը, — կը վճարէր, և աւելի կը վճարէր միշտ։ Բանակն ալ, ընդհանուր յոռի վարչութեան և պալատական քմահաճոյից զոհ երթալով, տկարացած և կազմալուծուած վիճակի մէջ էր։ Ազնուական բայց անկարող զօրապետներ, անվարժ և անօթի զօրքեր։ Եօթնամեայ պատերազմն քաջ մեծի մասին պարտութեանց շարք մը եղաւ Ֆրանսայի համար, Լուի ԺԶի օրով։ Զանազան արհեստակցութիւնք (էսնաֆութիւնք), որք առանձնաշնորհեալ կարգեր էին, արգելք կը լինէին ձեռագործից ու արդիւնագործութեան զարգացման։ Երկրին հողերուն մեծ մասն ազնուականաց և կղերին էին իբրեւ աւատ, և գիւղացիք իբրեւ ստրուկ կ'աշխատէին աւատական հողերուն վրայ։ Բնականապէս ալ դէջ կ'աշխատէին, զի բոլոր արդիւնքն այլոց էր, ատելի դասու մը։ Ոչ հողագործութիւն կար, ո՛չ արհեստ։ Խղճի ազատութիւն չի կար։ Մամլոյ ազատութիւնն իւր բացակայութեամբ կը փայլէր։ Ընդհանուր աղքատութիւն կը տիրէր։ Հաղորդակցութեան ճամբաներ չի կային։ Բարոյականութիւնը շատ վար ինկած էր, առաջին օրինակն Արքունիքէն առնելով։ Հռոմէական Կայսրութեան անկման ժամանակէն ի վեր, հանրային բարքն այնչափ չէր ստորնացած։ Բայց միւս կողմէ զօրաւոր միտքեր կ'երեւէին ժողովրդեան մէջ, Վոլդէռի, Մոնդէսքիէօյի, Ժան-Ժագ Ռուսոյի, և ԺԸ դարու Համայնագիտակ Բառարանն յօրինող ազատախոհից նման, որք նոր գաղափարներ կը տարածէին ժողովրդեան մէջ, հանրային միտքը կը յուզէին, հետաքրքրութեան, քննութեան և քննադատութեան ոգի մը կը զարթուցանէին։ Ժողովուրդն այլ եւս չէր քնանար։ Իւր աչքը կը բանար զեղծմանց առջեւ։ Երբեմն կը հեգնէր զանոնք՝ ծաղրական երգերով, այժմ կը քննադատէր, և խուլ ձայնով մը կը պահանջէր անոնց բարձումն։ Ըստ առաջնոյն ոչ ոք կը խորհէր Երրորդ Դասակարգին կամ ժողովրդեան վրայ։ Բայց արդ Երրորդ Դասակարգը կ'ուզէր որ իւր վրայ խորհուի։ Երեւելի տետրակ մը սա հարցումները կը պարունակէր. «Ի՞նչ է Երրորդ Դասակարգն. — Ազգն իսկ է։ — Ի՞նչ եղած է ցարդ. — Ոչինչ։ — Ի՞նչ պարտի լինել. — Ամեն ինչ։»

* * *

Այս էր ընդհանրապէս Ֆրանսայի վիճակը Լուի ԺԶ. ի օրով։ Բարենորոգման այլ և այլ ձեռնարկութիւններ, զորս հայրենասէր նախարարք ոմանք, գժբախտաբար յոյժ հազուագիւտ, փորձեր էին, ուրիշ արդիւնք չէին ունեցած, բայց եթէ լաւ ևս ի վեր հանել արքայական վարչութեան խորին ապականութիւնն, և բարուոքման անհնարութիւնն։ Եւ բնտասարդ թագաւորն, որ բացարձակ միապետ մ'էր, անձնապէս անկարող էր իշխելու, ըստ վկայութեան իւր բարեկամաց։

Ժողովրդեան մէջ ընդհանուր պահանջում մը կար Ազգային Երեսփոխանական ժողովոյ գումարման համար։ Ամբողջ երկու դարէ ի վեր, Ֆրանսայի թագաւորք չէին գումարած այս արտասովոր ժողով, համարատուութենէ ազատ մնալու համար։ Բայց ժամանակ էր համար տալու, ժամանակ էր դարման տանելու երկրին բազմադիմի ախտոյից։ Նախարարապետ և բարենորոգման բարեկամ Նէքէրի մեծագոյն գործն եղաւ համոզել թագաւորն որ հաւանի Ազգ. Ժողովոյ բացման։ Այս դէպք տեղի ունեցաւ 1789 մայիս 5ին, ի Վերսայլ(*)։ Երեք դասք ալ ներկայացեալ էին։ Կղերական դասն 291 Երեսփոխան ունէր, որոց 48ն արքեպիսկոպոս կամ եպիսկոպոս։ Ազնուականութիւնն ունէր 270 անդամ, յորոց մին արքայական իշխան մ'էր, 240ն՝ ազնուականներ և 24ը՝ դատաւորք բարձրագոյն ատենից։ Ժողովրդական դասն ալ ունէր 584 Երեսփոխաններ, որոց 12ն ազնուականներ էին որք ժողովրդային դասն ընդգրկած էին, 2 քահանայք, 18ը քաղաքապետք, 162 փոքր դատաւորք, 212 փաստաբանք, 16 բժիշք և 162 վաճառականք, հողատէրք և երկրագործք։

Երկար կը լինի պատմել այս նշանաւոր ժողովոյ գործերն, որ այնչափ ազնուապէս և քաջապէս ձեռնարկեց բառնալ այն զեղծումներ և դասակարգական խտիրներ, որք մահաբեր վէրքեր բացած էին հայրենեաց մարմնոյն վրայ։ Յիշենք համառօտիւ թէ, 1789ի Ազգային Սահմանադրական Ժողովոյ նպատակն եղաւ հաստատել Ազգին քաղաքական և ընկերական միութիւնն առաջի օրինաց, և այս միութիւնն երաշխաւորել ազատութեամբ։ Առաջին վէճն և անոր սաստած լուծումը՝ ցոյց կուտան Ժողովոյն բոլոր աշխատանաց նպատակը։ Խնդիր ծագեցաւ առաջին օրէն թէ, քուէարկութիւնք գլխո՞ւ վրայ պիտի կատարուին թէ երեք դասուց միութեամբ. մա՞րդ գլուխ, թէ դաս գլուխ։ Դասերն առանձին քուէարկելով, դասական խտիրք պիտի պահուէր։ Ի միասին և մարդ գլուխ քուէարկելով, ընկերային երեք դասերը պիտի միանային։ Առանձնաշնորհմանց ջատագովք, որոց գլուխն էր Արքունիքը, բնականապէս ընդդիմացան միութեան։ Բայց ժողովրդական դասու փաստաբանք, յորս կը գտնուէր նշանաւոր ազնուական մը՝ Միրապոյի կոմսն՝ յաջողեցան հետզհետէ իրենց դասին շահիլ միւս երկու դասուց մեծամասնութիւնն, և երեք դասուց ներկայացուցչաց միութեամբ, Ֆրանսայի համար հաւասարութեան սկզբնաւորութիւնն եղաւ։

Ժողովոյ այս առաջին աշխատութիւնք դժգոհութիւն պատճառեցին արքայական պալատան մէջ։ Թագաւորին շուրջը կը խորհուէր լուծել ժողովն։ Յունիս 20ին, ժողովրդական դասը, ժողովատեղին ներկայանալով, փակ գտաւ դրան։ Երեսփոխանք շուարեցան։ Պայլի, գլուխ ժողովրդական դասու, զանոնք գումարեց գնդախաղու մերկ և անշուք սրահի մը մէջ, ուր Երեսփոխանք, աթոռի վրայ կայնած, հանդիսաւոր երդում ըրին իրարմէ չբաժնուելու, մինչեւ որ Սահմանադրութիւն մը տան Ֆրանսայի։ Ֆրանսայի այս արժանաւոր զաւակները կրցան բռնել իրենց երդումն, հակառակ ամեն տեսակ դժուարութեանց, և 1789ի Ազգ. Սահմանադրական Ժողովը պարզ Սահմանադրութիւն մը խմբագրելէ շատ աւելի կարեւոր բարենորոգումներ ալ ի գործ դրաւ։

* * *

Յունիս 27ին նաեւ Թագաւորը ներկայ գտնուեցաւ։ Բազմաթիւ զօրքով շրջապատել տուաւ ժողովատեղին, և ինչ ինչ սպառնալից խօսքեր ըսաւ, որոց շնորհիւ Ժողովն և Թագաւորն՝ առաջին անգամ լինելով իրարու հետ գժտեցան։ Ըսաւ թէ Ժողովն իրաւունք չունի սահմանադրական վաղեմի իրաւանց վերաբերեալ խնդրով պարապելու։ Դուրս ելաւ հրամայելով որ Երեսփոխանք իրեն հետեւին. զի կ'ուզէր արգելուլ երեք դասուց միացումը։ Կղերն և Ազնուականութիւնն հպատակեցան. Ժողովրդական կուսակցութիւնք մնաց։ Արարողապետ Մարքիզն եկաւ Թագաւորին կողմէ, հրամայելով որ Երեսփոխանք դուրս ելնեն ժողովատեղիէն։ Միրապօ պատասխանեց. «Գացէ՛ք ըսէ՛ք ձեր տիրոջ, թէ մենք աստ եկած ենք ժողովրդեան կամքով, և սուիններու զօրութեամբ միայն կարելի է վանել զմեզ աստի։» Թագաւորը պահ մը վարանեցաւ, և գիջման կողմն հակեցաւ։ «Բանի որ կ'ուզեն մնալ, թո՛ղ մնան» ըսաւ։ Բայց Արքունիքը զօրք բերել կուտար երկրին ամեն կողմերէն։ Արդէն 30,000 զօրք կար ի Վերսայլ։ Կային օտար վարձկան զօրքեր ալ, Զուիցերացիներ և Գերմաններ։ Կռուիներ տեղի ունեցան այս զօրաց և Բարիզի ժողովրդեան միջեւ։ Ժողովը մեծ համակրութիւն կը վայելէր Բարիզի ժողովրդեան մէջ, և մի կողմէ ժողովոյն և միւս կողմէ ժողովրդեան դէմ ի գործ դրուող զինուորական սպառնալիքները կը զայրացնէին Կղերէն և Ազնուականութենէն դուրս ժողովրդեան ամեն կարգերը։

Գրգռեալ ժողովրդեան զայրոյթն իւր ծայրագոյն կէտն հասաւ յուլիս 14ին։ Ժողովուրդը զէնք կը խնդրէր ինքզինք պաշտպանելու համար վարձկան զօրաց յարձակումներուն դէմ։ Զէնք չէր տրուէր ժողովրդեան։ Խանութներու մէջ 36 ժամէն 50,000 նիզակներ շինուեցան, պետական պաշտօնատունէ մը 30,000 հրացանք, սուրք և թնդանօթք յափշտակեցան։ Յուլիս 12ին, արքայական զօրքը, ժողովրդային յարձակումէ մը երկնչելով, դուրս ելաւ Բարիզէ, որ ամբողջն ձեռքը մնաց։ Ժողովրդային բարկութիւնն ա-

---

(*) Առջի օրը, մայիս 4ին, հանդիսաւոր Պատարագ մատուցուած էր Ս. Լուդովիկեայ եկեղեցին, և Նանսիի եպիսկոպոսն, որ պաշտօնը կը մատուցանէր, նախ նշանաւոր խօսաւորութեամբ վերջացուցած էր իւր քարոզ. «Վեհափառ Տէր, ժողովուրդն որոյ վրայ կ'իշխէք՝ համբերութեան աններկրայելի փորձեր տուած է։ Նահատակ ժողովուրդ մ'է այս, որուն այն պատճառաւ կեանք մը թողուած լինել կը թուի, որպէս զի երկարագոյն ժամանակ տառապի ու կեղեքուի»։

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

111

ԽԱԶԱԳՈՂԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Ժ.

ՆԵՆԵԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Օրիորդի ծնողները, ի հարկէ, հակառակեցին նրա ամուսնանալուն մի բժշկի հետ, որ թէ իր դիրքով և թէ իր ծագումով չէր համապատասխանում նրանց կոչմանը։ Բայց օրիորդը այնքան բնաւորութեան զօրութիւն ունէր, որ, հակառակ ծնողների կամքի, թողեց հայրենական տունը, և սկսեց սիրած երիտասարդի հետ ապօրինի ամուսնութեամբ ապրել։ Այնուհետեւ ծնողները բոլորովին մերժեցին նրան, և միշտ անհաշտ մնացին նրա հետ։ Բայց տիկինը ունէր մի ազգական, որ ծառայում էր մի մինիստրութեան մէջ։ Այդ բարձր աստիճանաւորը սաստիկ սիրում էր տիկնոջը և գնահատում էր նրա արժանաւորութիւնները։ Նա մինչեւ անգամ մեղադրում էր տիկնոջ ծնողներին, որ այնպէս անգթաբար վարվեցան նրա հետ։ Ահա այդ ազգականի հետ տիկինը սկսեց բանակցութիւններ անել քո ազատութեան մասին և, կարծեմ, յաջողված է...

— Այդ դու ո՞րտեղից գիտես, իմ աւետաբեր հրեշտակ, — բացականչեցի ես և սկսեցի անյագաբար համբուրել նրա ձեռքերը։

— Գիտեմ, մի քանի օր առաջ տիկինը ցոյց տուեց ինձ մի նամակ, որ նոր էր ստացել Ս. Պետերբուրգից, ու ասաց. — «Նենէ, քո բախտը վճռված է»...

— Բարերա՛ր Աստուած, փառք լինի Քո գթութեանը, — կրկին բացականչեցի ես, յետոյ դառնալով դէպի իմ ազատիչը, ասեցի նրան. — Այդ բոլորը քեզ եմ պարտական, քե՛զ, եթէ դու չը լինէիր, եթէ դու չը գտնվէիր բժշկապետի ընտանիքի մէջ, ո՞վ կը դարձնէր նրանց բարի ուշադրութիւնը ինձ վրա։ Դու, միայն դու քո հրեշտակային բնաւորութեամբ գրաւեցիր քո տիկնոջ սիրտը և նրա ամուսնի ցաւակցութիւնը դէպի մեր թշուառ վիճակը։ Եթէ դու չը լինէիր, ես յաւիտեան կորած էի, թէ աշխարհի և թէ քեզ համար...

Այդ միջոցին դուռը բացվեցաւ և ծերունի սպասաւորի երկայն կերպարանքը յայտնվեցաւ շէմքի վրա։

— Օրիորդ, — դարձաւ նա դէպի Նենէն, — օրը լուսանում է, լաւ չի լինի, եթէ քեզ տեսնեն այստեղ։

Նենէն վերկացաւ և, ինձ հետ կրկին և կրկին համբուրվելով, հեռացաւ, ասելով.

— Շուտով դարձեալ կը տեսնըվենք...

ԺԱ.

ՆԵՐՈՒՄՆ

Սպիտակ տնակը այժմ բոլորովին ուրիշ տեսք էր ստացել։ Պատշգամբի կոտրատված վանդակապատը նորոգվել էր և փայլում էր ձիւնի պէս սպիտակ գոյնով։ Փթած սանդուղքները նոյնպէս նորոգված էին, և աջ ու ձախ կողմից շարած էին ծաղիկների թաղարներ։ Պարտէզի ճեմելիքները պատած էին մանրած աղիւսի ծիրանեգոյն փոշիով։ Հովանոցը կանաչազարդ վրանի էր նմանում։ արեգակի ճառագայթները անկարող էին թափանցել պատատուկ բոյսերի սաղարթախիտ հիւսուածքի միջից։ Պարտէզի ցանկապատը, բոլորած կենդանի բոյսերով, ներկայացնում էր մի ծաղկազարդ պատնէշ։ Ծառերը մանկացել էին, գեղեցկացել էին և տարածում էին իրանց շուրջը խիտ զովարար ստուեր։ Ծաղիկները քաղցրացնում էին ամառնային առաւօտները ախորժելի անուշահոտութեամբ։ Հին, աւերակ դարձած տնակը այժմ փոքրիկ դրախտ էր դարձել։ Նա ներկայացնում էր խիստ աչքի զարկող հակապատկեր իր տխուր, միօրինակ շրջակայքի մէջ։ Նենէի և նրա աշխատասէր տիկնոջ ջանքերին էին պարտական այդ բոլոր նորոգութիւնները։

Երեկոյեան պահուն, երբ արեւը խոնարհվում էր դէպի իր գիշերային մուտքը, Նենէն, ցնցուղը ձեռին, սառն ջրով սրսկում էր ցերեկվայ տօթից թառամած ծաղիկները։ Նրա ժրաջան տիկինը, կարճ շրջազգեստով, գոգնոցը կապած, կամ փոքրիկ բահը ձեռին փորում էր ածուները, կամ մկրատով կտրատում էր թուփերի աւելորդ ճիւղերը։ Նրա ամուսինը, հովանոցում նստած, գիրք էր կարդում և երբեմն, աչքերը բարձրացնելով, նայում էր գեղեցիկ կնոջ վրա և սքանչանում էր։

Այդ պարտէզում առաւօտները և երեկոյները հաւաքվում էին մի խումբ երեխաներ, աղայ, աղջիկ զանազան հասակների։ Այդ փոքրիկ չարաճճիները, աւելի քան երգեցիկ թռչունները, կենդանացնում էին գեղեցիկ դրախտը իրանց ուրախ ճըլվըլոցով։ Քրտնած, փթթած, կարմրած թշերով, վազվզում էին նրանք ճեմելիքներում, ընկնում էին փափուկ աւազի վրա, վեր էին կենում, և կայտառ, անվաստակելի բնաւորութիւնները դարձեալ շարունակում էին վազվզել։ Նենէի տիկինը գրկում էր նրանց, համբուրում էր, թափ էր տալիս փոշոտած հագուստները, պատուիրում էր զգոյշ լինել։ Նոյն պարտէզում տիկինը շինել էր տուել փոքրիկ մանուկների համար զանազան մարմնամարզական գործիքներ, սովորեցրել էր նրանց մի քանի կանոնաւոր խաղեր, կրթութիւններ, և շատ անգամ ինքն ևս մասնակցում էր նրանց զուարճութիւնների մէջ։ Դրանք տիկնոջ աշակերտներն ու աշակերտուհիներն էին, որոնց հետ առօրեայ ժամերում պարապում էր նա։ Դրանք թշուառ աքսորեալների զաւակներ էին, որոնց ընտանիքով ուղարկել էին այնտեղ բնակութեան համար։ Տարվայ բարեխառն ամիսներում տիկինը պարապում էր նրանց հետ պարտէզում, իսկ երբ սկսվում էին ցրտերը, նրանց համար մի առանձին սենեակ էր որոշել իր տան մէջ։ Նրա դպրոցը փոքրիկ էր. աշակերտների ու աշակերտուհիների թիւը հասնում էր ութն հոգու, որոնք սովորում էին ծրի և նոյնպէս ծրի ստանում էին թէ գրքեր և թէ դասական այլ առարկաներ։ Տիկինը իր ծանօթներից կազմել էր բարերարների մի շրջան, որոնք մատակարարում էին բոլոր ծախքերը։

Իսկ այնօր սպիտակ տնակում ինչ-որ անսովոր շարժում կար, ինչ-որ պատրաստութիւններ էին լինում։ Փոքրիկ չարաճճիները այլ ևս չէին վազվզում. Նրանք, դարան մտած կատուների նման, հաւաքվել էին հովանոցի շուրջը և պլշած աչքերով նայում էին դէպի սենեակների լուսամուտները։ Տիկինը այնօր խոստացել էր նրանց քաղցրաւենիք բաժանել։ Նոր բոված դահվէի ախորժելի հոտը դեռ բուրում էր օդի մէջ։ Սպասաւորը հագել էր իր սև սերթուկը, որ խիստ հազիւ անգամ էր հագնում, և կրում էր սպիտակ ձեռնոցներ ու սպիտակ փողպատ։ Նենէն նոյնպէս հագել էր իր տօնական հագուստները և պարտէզում ծաղիկներ էր փնջում սեղանի համար։ Բացված լուսամուտներից երեւում էին սենեակներում անցուդարձ անող հիւրերի ուրախ դէմքերը։ Ինքը բժշկապետը այնօր կտրել էր գլխի մազերն ու եղունգները, որ տարվայ մէջ հազիւ մի քանի անգամ էր պատահում, ժամանակ չը գտնելու պատճառով։ Իսկ նրա մանկահասակ կինը հագել էր մետաքսեայ սև հագուստ, և գլխի շիկագոյն խիտ գիսակների մէջ երեւում էր մի մեծ, սպիտակ վարդ։

ՐԱՖՖԻ

(Շարունակելի)

ուարկայ մը կը խնդրէր իւր վրէժխնդրութեան։ Յանկարծ բնազդային ազդակ մը լուեցաւ. «Ի Պաստի՛լ։» Ամէն թաղերէն ժողովուրդը դէպ հոն վազեց, հին բերդին վրայ։ Ծերունի զինուորներ կը հրամայէին այս խաժամուժ բանակին։ Ընդհանուր եռանդ մը կը տիրէ։ Պաստիլի վրայ կը քալէն բոլոր Բարիզցիք, զի ծերք և մանկունք իրենց որդւոց կամ հարց օրինակին կը հետեւէին։ — Պահապանը, տը Լօնէ, յանկարծակիի եկաւ. 200 վարձկան զինուոր միայն ունէր. բայց այնչափ ամուր էր բերդն և յարձակող խուժանն այնչափ անշարժ էր զինուորական գործողութեանց, որ ժամերով դիմացաւ Պաստիլ։ Արիւնուշտ եղաւ կռիւը. ժողովրդեան մէջէն 171 անձինք մեռան կամ վիրաւորեցան. ի վերջոյ յարձակողք յաջողեցան մտնել արքայական բերդին մէջ, զոր քանդեցին, և աւերակաց վրայ պարեցին։

Երկար ժամանակէ հետէ, Ֆրանսայի ժողովրդեան մէջ խոր ատելութիւն կար պետական բանտերուն դէմ, ուր կը դրկուէին և թերեւս անգամ մ'ալ լոյս չէին տեսներ ժողովրդեան բարեկամ շատ անձեր, շատ անմեղներ, պալատական մեքենայութեանց զոհեր։ Ընտրողներէն ոմանք իրենց Երեսփոխաններէն գրով խնդրած էին, ի մէջ այլոց, քանդել տալ զՊաստիլ։ Դատապարտուած էր Պաստիլ, քանդուելէն շատ առաջ։ «Երկաթէ դիմակով մարդն ալ,» որուն Կ. Պոլսոյ Հայոց Աւետիք Պատրիարքը լինելն ապացուցուած է, ի Պաստիլ դրկուած և բանտարկուած էր ժամանակին մոլեռանդ ճիզուիտաց ձեռամբ։

Թէ այժմու Ֆրանսացիք ո՛րչափ իրաւունք ունին Պաստիլի առման օրը նկատելու 1789ի Յեղափոխութեան առաջին նշանաւոր դէպքը, կը հաստատուի երբ յիշենք թէ այդ թուականին ալ ֆրանսական Յեղափոխութեան ո՛չ մի դէպքն օտար երկիրներու մէջ այնչափ ցնցում յառաջ բերաւ, որչափ Պաստիլի առման լուրը։ Պաստիլ վնաս մը չունէր Ռուսաց համար. բայց Պ. տը Սէկիւռ, 1789ին ֆրանսական դեսպան ի Բեդրբուրկ, կը գրէր թէ անհնար էր նկարագրել այն եռանդալից ուրախութիւն զոր Ռուսիոյ մայրաքաղաքին մէջ առաջ բերաւ Պաստիլի առման լուրը։ «Ֆրանսացիք, Ռուսք, Անգլիացիք, Տանիմարքացիք, Գերմանք և Հոլանտացիք, Բեդրբուրկի փողոցներուն մէջ, զիրար կը շնորհաւորէին, զիրար կը համբուրէին՝ փութկալից ազատութեան մը տարածայս առաջին յաղթանակին համար»։ Որպէս զի ժողովուրդը միշտ կոխկրտէ հին բերդն, անոր քարերով Բարիզի Քոնքորտի կամուրջը շինուեցաւ, և տեղւոյն վրայ 1830ին կանգնեցաւ «Յուլիսի Կոթողը»։

* * *

Լուի ԺԶ, երբ Պաստիլի առումն ու քանդումն իրեն իմաց տրուեցաւ, «ի՞նչ է այս, ապստամբութի՞ւն մ'է,» հարցուց։ «Ո՛չ, տէ՛ր իմ», պատասխանեց Լիանքուրի դուքսն, «Յեղափոխութիւն մ'է այս։» — Այս Յեղափոխութիւն բառին իմաստը չհասկցաւ Լուի ԺԶ.ի թոյլ. չփութաց օգուտ քաղել քանի մը նպաստաւոր առիթներէ, յորս տակաւին կրնար ազատել իւր թագը, մինչեւ որ, պահ մը գահազուրկ լինելէ և բանտարկուելէ յետոյ, 1793 յունուար 21ին գլխատեցաւ Յեղափոխական ժողովոյ մը (Քօնվանսիօնի) որոշմամբ, որոյ ծայրայեղութիւնք Ֆրանսական Մեծ Յեղափոխութեան ամենէն արիւնահեղ և ցաւալի մասը կը կազմեն։ Բայց այս ծայրայեղութիւնք իրենց անուղղակի օգուտն ունեցան։ Հին ապականեալ դրութիւնն արեան լճերու մէջ խեղդուեցաւ, և Նոր դրութիւն մը, Նոր ընկերութիւն մը, ծագում առին Պաստիլի աւերակներէն և Յեղափոխութեան բիւրաւոր զոհերուն աճիւնէն։ Կղերամիտ անձերու յետադիմականներէն հնարքն եղած է՝ մարդասիրաբար ողբալ Ֆրանսական Մեծ Յեղափոխութեան արիւնուշտ տեսարանաց վրայ՝ բուն իսկ Յեղափոխութեան արժէքն աղօտ կարելու համար, և իբրեւ նախատակ ցոյց տալ Լուի ԺԶ. դժբախտ թագաւորն՝ անտես ընելու համար անգնահատելի բարիքը զոր Ֆրանսա ձեռք բերաւ հին դրութեան քանդմամբ։ Անկողմնակալ անձեր պիտի վկայեն, ընդհակառակն, թէ իրաց և գաղափարաց ծանուցեալ վիճակին մէջ, որուն համար գլխաւոր պատասխանատուք հին դրութեան ներկայացուցիչներն իրենք էին, առաւել անխառն ցնցում մը եւ առաւել մեղմ շարժում մը չէին բաւեր ճշմարտապէս Նոր դարագլուխ մը բանալու Ֆրանսայի, — դարագլուխ, զոր Երախտապարտ թոռունք 1789ի մեծ մարդոց՝ տօնեցին այս երկուշաբթի, և պիտի տօնեն ցորչափ կանգուն մնան Հանրապետութիւնն և Յեղափոխութեան սկզբունքները, կամ լաւ եւս՝ ըստ ասութեան Մեծին Նաբոլէոնի «1789ի ճշմարտութիւնները»։

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ԹՈՒԼԵՐԱ. Իւր կարեւորութեան պատճառաւ, ամբողջապէս կը թարգմանենք այն դիտողութիւններ զորս գերմանացի հանրածանօթ գիտուն Տր. Քօխ հաղորդած է Թէյմզի թղթակցին՝ Թուլոնի մէջ իւր քննութիւններն աւարտելէ յետոյ։ «Վաղուէ կ'երթամ Մարսիլիա, ըսեր է Պ. Քօխ։ Աստ ուրիշ բան չունիմ ընելիք։ Ես իմ գաղափարս կազմած եմ։ Մեռելոց վրայ կատարած նոր անդամազննութիւններս հաստատեցին առաջնոյն եզրակացութիւնն, որով տարակոյս չկայ թէ այս Քոլերա Ասիական տեսակէն է։ Թուլոնի Քոլերային երեւոյթները ճշդիւ յար և նման են այն երեւութից զորս Հնդկաստանի մէջ դիտեցի։ Միքրոբ կոչուած մանրադիտական անասունիկներն ալ նոյն են։ Անոնցմէ աւելի մեծ քանակութեամբ գտայ Ֆրանսացի Պէրնաւ զինուորի մարմնոյն մէջ, զոր կիրակի գիշեր անդամահատութեամբ քննեցինք, քան յԵգիպտոս, Պ. Պ. Ստրաուս և Ռու, որք ներկայ էին, նմանապէս վկայեցին հնդկական Միքրոբի ներկայութեան յԵգիպտոս, և ըսին թէ զայն միշտ խառն կը գտնէին ուրիշ Միքրոբներու հետ։ Այժմ քննութեան առարկայ եղած դիակին վրայ հնդկական Միքրոբները շատ աւելի էին։ Միքրոբը դուն ուրեք կը գտնուի ստամոքսին մէջ։ Համաճարակ տեսակ մը միջոցին, մարսողական գործարանք կը խանգարին, և այս խանգարմունք անպատ են Միքրոբին, որ կ'ապաստանի մեծ աղեաց մէջ։ Հոն կ'աճի անհամեմատապէս, աղեաց հեղուկ նիւթին մէջ։ Կը պատճառէ փորհարութիւններ և փսխումներ, ուստի առաջ կու գայ արեան կեդրոնացում մը, որով կ'արգիլուի արեան շրջանը։ Հետեւանքն այս կը լինի որ հիւանդը պաղ կը զգայ։ Բաց աստի, Միքրոբը կ'արտադրէ ճշմարիտ թոյն մը, զոր և անմիջապէս մահաբեր տեսակէն Քոլերա մը պատճառելով։ Կ'ըսէք թէ այս ծանօթութեանց շնորհիւ պէտք է որ Միքրոբը շուտով ջնջուի. բայց ես բժիշկ չեմ, այլ լոկ դիտող եմ։ Այլոց կը վերաբերի օգուտ քաղել իմ դիտողութիւններէս և խորհուրդներէս։ Որպէս արդէն յայտնած եմ, Քոլերայի վարակումն օդոյ միջոցաւ չփոխադրուիր, այլ Միքրոբներն ուտելով, որք այսպէս կը մտնեն մարսողական գործարանաց մէջ։ Միքրոբները կ'ուտուին թէ՛ ջրոյ և թէ՛ չոր ուտելիքի միջոցաւ։ Այս պատճառաւ խորհուրդ տուի կառավարութեան՝ փակել հորերն, և ժողովուրդն ալ յորդորեցի որ առաջուց եռացած ջուր խմէ, կամ վարակեալ վայրերէն հեռի տեղերէ բերուած ջուր, կամ փոքր ինչ հանքային ջուր։ Նոյն պատճառաւ պէտք է նաեւ սաստիկ տաքութեամբ եփած կերակուրներ ուտել, պտուղներն ստկել, կամ խաշելէն յետոյ ուտել։ Միքրոբը կը մեռնի երբ ենթարկուի տաք և մանաւանդ չոր օդի։ Միքրոբը փոխանցական է՝ հիւանդին վերքէն կամ փորէն աղտոտուած նիւթերուն հետ պղծուելով, կամ պղծած առարկաներ գործածելով։ Հետեւաբար, առաջին բժշկական միջոցը պարտի լինել՝ հիւանդաց ճերմակեղէններն ենթարկել չոր տաքութեան մը, կամ սաստիկ ածխային թթուի. վասն զի Միքրոբը չի կրնար ապրիլ ածխային թթուի սաստիկ բաղադրութեանց կամ սաստիկ չորութեան մէջ։ Խոնաւութիւնը կը սիրէ, և անոր մէջ կ'աճի։ Քոլերա դոյութիւն ունեցող երկիրներ, Միքրոբը գտնուած է չվազող ջուրց լճակներու մէջ։ Սաստիկ հով մը, օրինակի համար Միջերկրականի Մօեթրալ կոչուած հիւսիսային արեւմտեան հովը կը փճացնէ Միքրոբը սենեկաց, ճերմակեղէնաց մէջ, ևն։ Պղծած առարկայ մը, անգամ մը չորցուելէ յետոյ, վտանգաւոր չէ այլ եւս, վասն զի Միքրոբը կը մեռնի, և անկարող է սերունդ արտադրել։ Այս պատճառաւ կը յանձնարարեմ քանի մը ժամ փակել և չորցնել վարակեալ սենեակներն։ Ոսկերներն, անոնց դոյքն և նամակներն արդի դրութեամբ ծխմանց ենթարկել երեւակայական դարման մ'է։ Չեմ հասկնար թէ ի՛նչպէս կարելի է լերջօքէն կարեւորութիւն տալ այդ տեսակ միջոցներու։ Փողոցները լուալ շատ գէշ է Քոլերայի ժամանակ, որովհետեւ՝ խոնաւութիւն արտադրելով մեծագոյն դիւրութիւն կ'ընծայէ Միքրոբին աճման ու զարգացման։ Փոշին լաւագոյն է քան խոնաւութիւնը։ Գալով արդի Քոլերային սկզբնաւորութեան, ի նկատ առնլով Ֆրանսայի նաւային վարչութեան ի գործ դրած զգուշութիւններն, կը կարծեմ թէ վաճառականական նաւու մը միջոցաւ բերուած է Թուլոն, անգլիական նաւու մը միջոցաւ, որ խիղճ չըներ ծովը նետել ճամբան պատահած մեռեալներն, և լռութիւն պահել։ Բոլորովին կը հակառակիմ այսպիսի օրերու մէջ մեծ ամբոխներու գումարման։ Տօնախմբութիւններէ պէտք է հրաժարիլ, և հետեւաբար Պաստիլի առման հանդէսն ալ այս տարի պէտք չէ կատարել։»

ՃԻԲՐԱԼԹԱՐ. Անգլիացւոց և Սպանիացւոց միջեւ վէճ մը ծագեցաւ Ճիբրալթարի մօտ, սպանիական ամրութեանց գծին վրայ։ 500 զօրք օգնութիւն դրկուեցաւ յիշեալ ամրութիւնները պահպանող զօրաց, և ուրիշ գունդ մը դրկուելու վրայ է։ Սպանիացի ոստիկան մը սահմանն անցաւ՝ անգլիացի հսկիչ մը ձերբակալելու, բայց անգլիական հողին վրայ գումարեալ ամբոխ մը թոյլ չտուաւ։ Ոստիկանք նոյն ամբոխի վրայ կրակ ընել կը պատրաստուէին, երբ սպանիական կառավարութեան բարձրագոյն պաշտօնատարք միջամտեցին և արգիլեցին։ Սպանիացւոց և Անգլիացւոց միջեւ սաստիկ հակակրութիւն կը տիրէ։

ԿԱՒԿԱՍԻԱ. Տփղիսի Քաւքազ լրագիրը կը ծանուցանէ թէ Մինկրելիոյ ազնուականներէն Միքելաձէ անուն իշխան սպայ մը, որ ռուսօ-թուրք պատերազմին մէջ նշանաւոր ծառայութիւն մատուցած էր, յունիս 23ին սպաննեցաւ Կուտայիսիոյ երկաթուղւոյն Սամրէտի կոչուած կայարանին մօտ, Շէկնոտի անուն ոստիկան սպայի մը ձեռամբ, որ սաստիկ վէճ մը ունենալէ յետոյ իշխանին հետ, ռըվոլվէրի երեք մահաբեր հարուածներ արձակեց անոր վրայ։ Վէճին նիւթը դեռ յայտնի չէ։

— Պաքուի լրագիրը կը ծանուցանէ թէ սահմանագլխին վրայ աւազակութիւններ գործող պարսիկ աւազակաց գլուխ Մոլլա Սամըտ յունիս 23ին Սուրբայի մօտ բռնուած է Խազախաց ձեռամբ։

— Ռուսական իշխանութիւնք իմանալով թէ Քերպելայի մօտ համաճարակ տեսակ մը ծագած է, Կաւկասիան պաշտպանելու համար զգուշական միջոցներ ձեռք առած են։

ԼՈՐՏ ՏԷՖՐԻՆԻ ԱՐՋԸ. Մայրաքաղաքիս անգլ. դեսպանն Իռլանտայի անգլիացի հարստագոյն կալուածատէրերէն մին է։ Իւր ագարակը կը գտնուի Տաունի գաւառին մէջ, ի Քլանտէպոյ, որոյ անուամբ կը կոչուի Ն. Վսեմութեան երէց որդին լորտ Քլանտէպոյ, որ քաջ լողացող է, և անցեալ տարի Վոսփորի մէկ եզերէն միւսն անցաւ լողալով, իսկ այժմ հայրենի ագարակին մէջ կը բնակի։ Արդ, կը կարդանք անգլ. վերջին լրագրաց մէջ թէ, արջ մը, զոր լորտ Տըֆրին, երբեմն անգլ. դեսպան ի Բեդրբուրկ, իւր հետ բերած էր Ռուսաց մայրաքաղաքէն, վերջին օրերս մահացու կերպիւ վիրաւորեր է իւր պահապանը՝ Պէլ անուն, որ լորտ Տըֆրինի հաւատարմագոյն ծառայից մին էր։ Պէլ ձեռքն ունենալով եղան կամ երկժանի մը, կրցաւ քանի մը վայրկեան դիմադրել ահեղ գազանին, որ սակայն սաստիկ յարձակմամբ մը խածաւ խեղճ պահապանն, և վիզն ու դէմքին մէկ մեծ մասը փրցուց հանեց։ Պէլի աղաղակները լսելով, լորտ Քլանտէպոյ և ագարակի ուրիշ մարդիկ վազեցին օգնութեան հասան և թոյլ չտուին որ արջը բոլորովին գլխատէր խեղճ մարդը, բայց Պէլ ինքզինք կորուսած էր, և ապրելն անյուսալի է։

ՍՊԱՆԻԱ. Յանձնախումբ մը կազմուած էր սպանիական նաւատորմին վիճակը քննելու և բարւոքման միջոցներ առաջարկելու համար։ Յանձնախմբին տեղեկագրէն կ'երեւի թէ, 1883 ին Սպանիա ունէր ընդ ամենն 5 մեծ զրահաւոր, 1 զրահաւոր յրասար շոգենաւ, շրջուն հրետանի մը, և 117 ուրիշ տեսակ նաւեր։ Սպանիա ունի նաեւ 35 թնդանօթակիր շոգենաւեր Քուպայի և Բորթօ Րիքոյի պաշտպանութեան համար։ Ըստ նոր առաջարկութեանց, նաւատորմին վերակազմութիւնը տասն տարւոյ մէջ պէտք է լրանայ, և այն ատեն Սպանիա պիտի ունենայ մեծ ու փոքր 14 զրահաւոր և 7 առաջնակարգ, 9 երկրորդ կարգի և 11 երրորդ կարգի մարտանաւեր, 32 թորփիլակիր նաւեր և 6 փոխադրանաւեր։ Այս այս 230,000,000 սպանիական դահեկան կը խնդրուի 10 տարւոյ մէջ ծախք ընելու համար։

— Սպանիոյ հանրային շինութեանց կղերամիտ Նախարար՝ Պ. Բիտալ մօտերս արտասանած մէկ ճառին մէջ ինքզինք Պապին աշխարհային իշխանութեան կուսակից ցոյց տուած լինելով, Հռոմի թէ՛ կղերական և թէ՛ ազատական լրագիրք մեծ կարեւորութիւն կ'ընծայեն այս ճառին։ Կ'ըսուի թէ Իտալական կառավարութիւնն յոյժ վշտացեր է սպանիական Նախարարի մը բերնէն այդպիսի պաշտօնական յայտարարութիւն մը լսելով, որ Իտալիոյ դէմ սպառնալիք մ'է, և բացատրութիւն խնդրեր է Մատրիտէ։

ՈՒԺԱՆԱԿ. Թրիէստէն քաշուած հեռագրեր կը ծանուցանեն թէ Աւստրիոյ Անիշխանականք Աւստրիոյ Կայսեր և Արքունեաց Վիէննայէ Բոլա գնացած միջոցին նորէն փորձ փորձած են երկաթուղին օդն հանելու։ Ուժանակի ռումբեր նետուած են կառախմբին վրայ, բայց բարեբախտաբար վնաս չեն պատճառած։ Քանի մը ձերբակալութիւնք եղած են։

ՖՐԱՆՍԱ. Այս երկուշաբթի ի Բարիզ տեղի ունեցած Ազգային տօնին համար Բարիզի քաղաքային խորհուրդը ծախք ըրած է 700,000 ֆրանքի չափ։ 20,000 ֆր. նպաստ բաշխուած է աղքատաց՝ ձեռամբ Աղքատաց վարչութեան, որ այս տօնի առթիւ 108,000 ֆր. նուէր ստացած է։

Ա Զ Դ

ՄԱՍԻՍի յատուկ բոլոր նամակներ, թէ՛ դրամական և թէ՛ թղթակցական, յետ այսորիկ պէտք է ուղղուին ԱՐԵՒԵԼՔի Վարչական Խորհրդոյ հասցէին, ի Ղալաթիա, Նորատունկեան խան։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Երուսաղէմայ Ամեն. Տ. Եսայի Ս. Պատրիարք Հօր դէմ դատ բացած է Օթմանս անուն վարդապետ մը, բողոքելով թէ Նորին բարձր Սրբազնութիւնը բռնի գրաւած և վանքին յատկացուցած է իւր սեպհական կալուածներն, և ինքն այս բռնակալութեան ժամանակ հալածու ազատելով իւր անձն՝ ի Հռոմէականութիւն յարած է։ Արդ՝ որովհետեւ Պոլսոյ Հոգեւոր առաջին դատարանն ըստ օրինի հրաւէր ուղղած է առ Ամեն. Տ. Եսայի Ս. Պատրիարք Հայրն, հարկադրեցաւ Նորին Ամենապատուութիւնն՝ իւր կողմանէ փոխանորդ կարգել Պատրիարքարանի Թուրքերէն դիւանադպիր Խաչատուրեան Կարապետ էֆէնտին, որ այսօր պիտի ներկայանար դատարանին, սակայն Քաղաքական ժողովոյ շաբաթական նիստին օրն լինելուն պատճառաւ՝ ուրիշ օր պիտի երթայ։ Բողոքաւոր Օթմանս վարդապետ Երուսաղէմայ վանքի միաբաններէն է. անդ բազում տարիներ խնամուած ու ամեն շնորհ վայելած է. իւր անվայել վարմանց համար յաճախ յանդիմանութիւն հրաւիրուած, անուղղայ մնացած և ապաշնորհ գտնուած է։ Ի Հռոմէականութիւն յարելէն յետոյ, քանիցս այսպիսի բողոքներ ըրած և կառավարութիւնը ձանձրացուցած է։ Տարակոյս չունիմք, թէ դատարանն ամենայն արդարութեամբ պիտի վճռէ Օթմանսայ անիրաւութիւնն։

Վանայ Վարագայ վանքն ալ, Ձնքուշի վանուց նման, այս օրերս դրաւեալ է կալուածական իրաւանց խնդրով։ Յիշեալ վանքին սեպհական են՝ Վանայ մերձակայ Սէլխանէ գիւղի արտօրայք, օրինաւոր կալուածագրերով։ Այժմ Թուրքք կուզեն տիրել այդ արտօրէից, և որովհետեւ վանքին տեսչութեան կողմանէ գրուած է առ Ամեն. Ս. Պատրիարքն, Նորին բարձր Սրբազնութիւնը գրեց առ Վսեմ. կուսակալն Հէքքեարիի, որոյ իշխանութեան ներքեւ է նոյն գիւղը, և խնդրեց պաշտպանել Վարագայ վանուց սեպհականութեան անհերքելի իրաւունքն։

Ազգային վարչութեան Քաղաքական ժողովն այսօր Ղալաթիոյ խորհրդարանին մէջ կընէ իւր շաբաթական նիստն։

Վսեմ. Աբրահամ փաշա երէկ երեկոյ Օրթագիւղ Ամեն. Ս. Պատրիարք Հօր այցելեց։

Երկուշաբթի, Իւսկիւտար Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, Նորատունկեան Զաքուհի օրիորդի հետ Ստեփանեան Պօղոս էֆէնտիի ամուսնութեան պսակադրութեան խորհուրդը կատարուեցաւ։

Ռուսական Քաւքաս լրագիրը կը ծանուցանէ, թէ Կարսի Գարաքուրդ կոչուած տեղը ի նախնի ժամանակաց մնացած եկեղեցի մը կայ, որ մզկիթ էր՝ մինչեւ տեղւոյն մահմետականաց ի Թուրքիա գաղթելն. թէ եկեղեցւոյն կամարն փլած լինելով՝ այժմ տախտակներով գոցուած է, և եկեղեցւոյն պատին արտաքին կողմը դրոշմուած հայկական տառերէն, որ հազիւ նշմարելի են, յայտնի կերեւի՝ ժամանակաւ հայկական եկեղեցի լինելն. թէ եկեղեցւոյն պատերը շինուած են յղկեալ և մեծամեծ քարերով, և եկեղեցւոյն մերձակայ գերեզմանատան քանի մը դամբաններու վրայի խաչերը կոտրտուած են և գիր չկայ. և թէ՛ վերջին ժամանակներս, մահմետականաց ի Թուրքիա գաղթելէն յետոյ, ռուսական եկեղեցի եղած է Ս. Գէորգ անուամբ։

Երեւանի Նորք կոչուած արուարձանի Հայոց եկեղեցւոյ պատը ծակելով գողերն՝ 1,800 րուբլիի արժէքով եկեղեցական սպաս գողցեր են։

Ազգային ժողովոյ Զ րդ նիստն տեղի պիտի ունենայ ամսոյս 6 ին Ուրբաթ օրն ի Ս. Լուսաւորիչ Եկեղեցի Ղալաթիոյ։

Ատեանը պիտի բացուի առաւօտեան ժամը 2 ին և գոցուի 5 ին։

Հրաւիրեալ են Ազգային Երեսփոխանք իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալ։

Մնամ աղօթարար
Ի դիմաց Ս. Պատրիարք Հօր
Փոխանորդ Նորին

3 Յուլիս 1884

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Ատենական գործողութիւնք.

Բ. Շարունակութիւն վիճաբանութեան ի վերայ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՆԼՄՏՑՈՅՑԻ։

Գ. Առաջարկութիւն Խառն ժողովոյ Ազգ. Վարչութեան ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՆԴՐՈՑ նկատմամբ։

Դ. Ընտրութիւն Գրդ. Ատենադպրի Մայր Դիւանի։

Ատենադպիր
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՇԱԿՈՒՆԻ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նարուէի հիւպատոս կարգեցաւ Պէօթէնճէլի նախորդ հիւպատոս Եսատ պէյ.

Պէօթէնճէլի հիւպատոս անուանեցաւ՝ հանրային շինութեանց պաշտօնատան նախկին թարգմաններէն Ալի Նիհատ պէյ.

Թէքիրտաղի նախնական դատարանի ընդհանուր դատախազի օգնական կարգեցաւ՝ յիշեալ դատարանի առաջին քարտուղար Ահմէտ էֆէնտի.

Պրուսայի նախնական դատարանի Հուգուգի բաժնի նախագահ անուանեցաւ՝ Կարնոյ նախնական դատարանի առաջին նախագահ Հիքմէթ պէյ.

Կարնոյ նախնական դատարանի առաջին նախագահ կարգեցաւ երկրորդ նախագահ Ահմէտ Ճէմիլ էֆէնտի, և երկրորդ նախագահ՝ Ահմէտ Վէֆիգ էֆէնտի, որ պատժական դատարանի անդամ էր.

Երուսաղէմայ նախնական դատարանի պատժական բաժնի նախագահ անուանեցաւ՝ Հօրանի նախորդ Նայիպ Սայիպ էֆէնտի.

Չորրորդ աստիճան Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ տրոց վերատեսչութեան առաջին քարտուղարներէն Ֆէրիտ պէյի։

Վեհ. Սուլթանն՝ Աւստրիացի Վինտիշկրէձ իշխանին միջոցաւ ինքնագիր նամակ մ'ուղղեց Ֆրանց Ժոզէֆ կայսեր, որով շնորհակալութիւն կը յայտնէ վերջերս նուիրեալ նժոյգներուն համար։

Վեհ. Սուլթանը 30,000 ղրուշ ամսաթոշակ յատկացուց Արիֆի փաշային։

Թէրճէմանը – Հագիգաթ ի լոյս ծանուցած է թէ վերաքննութեան դատարանի ընդհանուր դատախազ Լաթիֆ պէյի երկրորդ աստիճան Օսմանիյէ պատուանշան տրուած է։

Դարձեալ նոյն լրագիրն ի լոյս կը գրէ թէ դրամատէր մը այս օրերս կառաջարկէ կառավարութեան՝ իրեն վարձու տալ Գարաքէօյի և Ունգափանի կամուրջները, պայմանաւ որ յիշեալ կամուրջներուն սովորական հասոյթէն 100 էն 25 աւելի վճարէ ինքն, և միանգամայն 100 էն 5 ալ յատկացընէ բարեգործական գործի մը, ըստ որոշման կառավարութեան։ Այս անձն յատկապէս մարդ կանգնեցնելով կամուրջներուն գլուխը, փորձով համոզուեր է թէ աւելի հասոյթ կը լինի, եթէ հաւատարմութեամբ գանձուի, և թէ՛ խոստացեր է իւր քննութեանց ու հետազօտութեանց արդիւնքն հաղորդել Թէրճէմանի եթէ հրատարակել խոստանայ։ Եւ Թէրճէման – Հաքիգաթ այսօր խոստացած է հրատարակել ինչ որ ճշմարտութիւն է։

Ռուսական դեսպան Պ. Նէլիտօֆ՝ որ առաջին թարգման Պ. Իվանօֆի հետ Մոնթ-Աթօս (Այնօրօզի վանքը) գնացած էր պտոյտ մ'ընելու, նախընթաց օրը վերադարձաւ։ Դեսպանը Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ արտաքին գործոց Նախարարին հետ։

Բ. Դուռը շրջաբերականաւ մը ծանոյց տէրութեանց՝ Թուրքիոյ և Պուլկարիոյ միջեւ առեւտրական դաշնագրոյն կնքումը, մի օրինակն ալ կցելով շրջաբերականին։ Բ. Դուռն այս առթիւ հաստատեց թէ հանրային ծառայութեան այս ամենակարեւոր ճիւղը կատարելապէս պիտի բարւոքի և մեծ յառաջդիմութեան մէջ պիտի դրուի, օսմանեան Թղթատարութեանց միացմամբ։

Աւստրիական կառավարութիւնը Բ. Դրան հաղորդեց այն առողջապահիկ միջոցները զորս ձեռք առած է երկիրը քոլերայի դէմ պաշտպանելու համար. միանգամայն հրաւէր կարդաց Թուրքիոյ որպէս զի իւր կողմէ հնարաւոր եղած զգուշութիւններն ընէ, սոսկալի ախտին ի Թուրքիա մուտքն արգիլելու համար։ Աւստրիական կառավարութիւնն համանման հրաւէրներ կարդաց միւս տէրութեանց եւս։

Կըսուի թէ Մավրօեէնի փաշայի որդին Տիմիթրաքի էֆէնտի Մավրօեէնի պիտի յաջորդէ Լոնտոնի Օսմանեան դեսպանատան քարտուղար Միւզուրիւս պէյի՝ որ դեսպանատան խորհրդական անուանուեցաւ։

Ռամազան ամսոյն մէջ Ըլտըզի Կայս. պալատն ընթրող զինուորականք դրամական նուէրներ կընդունին իրենց աստիճանին կարգաւ։ Լիվա փաշա 40 Օսմ. ոսկի, Միրալայք 20, Գայմագամք 12½, Հազարապետք 10, Գօլ աղասի 6, Հարիւրապետք 3¼, Միւլազիմք 2½, Չավուշք 2, Տասնապետք ½ և զինուորք ¼։

Հեռագրական ու թղթատարական վերատեսչութիւնն, առաջիկայ Պայրամի տօնէն յետոյ, 5–6 ուսումնաւոր էֆէնտի պիտի ղրկէ Բարիզ, բարձրագոյն գիտութեանց ու արուեստից ուսման համար։

Քէնըլըի կառավարիչ Մուսթաֆա պէյ երէկ մայրաքաղաքս եկաւ հրամանաւ։

Այս տարի ալ, 250 աղքատիկ մարդիկ կայսերական Սիւրրէի շոգենաւն ընդունեցան ձրի։

Իզմիրի կուսակալութենէն յուլիս 1 թուով հեռագրուած է առ. Ներքին գործոց նախարարութիւնն։ — «Այս գիշեր ժամը 4ին, քաղաքիս Պալըգ-պազար ըսուած տեղն տաղձի ամբարէ մը հրդեհ պատահեցաւ, և որովհետեւ այն պահուն սաստիկ էր հովը և կը նպաստէր հրդեհին ճարակման, անձամբ փութացայ հրդեհին տեղը ծովային ու ցամաքային զօրաց և ժանտարմայից ու ոստիկանաց հետ, և ամեն կողմանէ տարօրինակ ջանքեր եղան, բայց հովին առաւել սաստկանալուն պատճառաւ մոխիր դարձան 5–6 արճաւրանք, 1 դրօսարան, Սպարթալեան խանն ու վաճառատունք, և այլ երկու վաճառատունք (ապահովագրեալ) և Նաւահանգիստը գտնուող մեծ աւազանաւ մը»։

Անգղիական դեսպանն երկուշաբթի գիշեր ի Թարապիա շքեղ կոչունք մը տուաւ ի պատիւ երեւելեաց ոմանց։

Ինպաստ Պէյ-Պազարի հրդեհէն վնասեալ կալուածոց, մինչեւ ցարդ հանգանակեալ դրամին գումարն է 523,700 ղրուշ։ Այս գումարին մէջ է Օգոստ. Սուլթանին շնորհած 1500 լիրան։

Անցեալ շաբթու, ի Չէշմէ, երկու անգամ թեթեւ և մէկ անգամ ուժգին գետնաշարժ եղեր է, բայց բարեբաղդաբար առանց վնասու։

Օգոստ. Սուլթանն, երկուշաբթի Գաղղիոյ Հանրապետութեան տարեդարձի առթիւ, Նուրի պէյն յատուկ շքախմբով Թարապիա դեսպանատունը ղրկեց ի շնորհաւորութիւն, և Նոյն գիշերը դեսպանատանն ու պարտէզը զարդարուեցան լուսավառուցան, հրախաղութիւնք եղան, խընճոյք տրուեցաւ, և բաժակ քամուեցաւ վասն կենաց Նորին կայսերական վեհափառութեան :

Օսմանեան ընդհանուր պարտուց վարչութիւնն, յունիս ամսոյ մէջ, 170 հազար 679 լիրա մուտք ունեցեր է, որոյ 15416 ը՝ Արևելեան-Րումէլիի հարկէն, 62500 ը՝ ծխախոտի մենավաճառէ, և մնացեալն՝ հինգ անուղղակի տուրքէ են : Յիշեալ գումարը՝ բաղդատելով նախորդ տարւոյ յունիս ամսոյ մուտից հետ՝ 19326 լիրա աւելի կը գտնուի :

Քանի մ'օր յառաջ 40 հազար ղըրուշի գումար մը ղրկուեր է Ներքին գործոց պաշտօնատունն, ի հաշիւ 99 ի անվճար ամսաթոշակաց, և երեկ վըճարուեր է :

Թէրճէմանը-Հագիգաթ լրագիրն՝ Պոլսոյ Նաւահանգստի վերատեսչութենէն առեր է, թէ Սև ծովէն Ռուս դրօշակաւ Պոլիս եկող շոգենաւն, որոյ համար կըսուէր թէ քարանթինայէ խոյս տուեր է, քարանթինայի ժամանակը լրացնելէն ետքը Պոլիս մտած է, և թէ՝ ամեն հսկողութիւն կը լինի առողջական կանոնաց անթերի գործադրութեան համար :

Մայրաքաղաքէս տրուած հրամանաց համաձայն, Ադրիանուպոլսոյ մէջ առողջապահական յանձնախումբ մը կազմուեր է, զինուորական բժիշկներէ և քաղաքային ու զինուորական պաշտօնատարներէ : Յանձնաժողովոյ պաշտօնն է հսկել փողոցներու և բնակարանաց մաքրութեան և հասարակաց անդեան վրայ : Յանձնախումբն իւր տրամադրութեան ներքև ունի բաւական թուով ոստիկաններ և քաղաքապետական պաշտօնեայներ : Ադրիանուպոլսոյ շըրջակայ կեդրոններուն մէջ ալ նմանօրինակ յանձնախումբեր պիտի կազմուին :

Անցեալ տարի ընկղմած Բրօվանս շոգենաւուն վեր հանելու յոյսերն սպառած, և ռուսական ընկերութիւնը շոգենաւուն գինը վճարած լինելով՝ այժմ Ղալաթիա բուղորդաց ոմանք կը բանակցին Ռուս ընկերութեան հետ՝ շոգենաւուն մէջ գտնուածներն հանելու, և իրենց ու ընկերութեան մէջ բաժնելու համար, և ընկերութիւնն ալ այս առաջարկութիւնն ու պայմանը ընդունելու հակամէտ է եղեր :

Տրապիզոնէն լուր տրուած է թէ տեղւոյն Նաւահանգիստն (շոգենաւուց), որոյ շինութեան ձեռնարկեալ է 3-4 տարիէ հետէ և կիսաշէն լքեալ մնալով՝ ալեաց բաղխմանէն աւերելու մօտ էր, Ներկայ կուսակալին շնորհիւ շինուեր աւարտեր է :

Մայրաքաղաքէս յունիս 8 թուով հետևեալը կը գրեն Վիէննայի կէս պաշտօնական թերթի մը ·

«Մեծ · Եպարքոս Սաիտ փաշա գովելից արժանի հաստատամտութեամբ մը կ'ջանայ երկրին մէջ կառավարութեան ազդեցութիւնը բարձրացնել և կեդրոնացնել : Այս նպատակին հասնելու միջոցներէն մին է Թուրքիոյ օտար Թղթատարութեանց բարձումն, որ երկար ժամանակէ հետէ կը խորհուի : Այդ Թղթատարութեանց գոյութիւնն յայտ յանդիման անարգանք մը կը նկատուի Օսմանեան պետութեան համար, քանի որ նա ալ դաշնակից է Թղթատարական Միութեան, և հետևաբար միւս ստորագրող տէրութեանց նման, իւր Թղթատարութեանց վարչութեան մենաշնորհը վայելելու իրաւունք ունի : Ասոր համար Բ · Դուռը շրջաբերական մը կը պատրաստէ, զոր մտադիր է ի մօտոյ տէրութեանց ուղղելով, օտար Թղթատարութեանց բարձումը պահանջել : Իրաւ է թէ դեսպանական ակմբոց մէջ չյուսացուիր որ Բ · Դրան խնդիրն անմիջապէս գործադրուի, սակայն կարծիք կայ թէ, քիչ թէ շատ մօտաւոր ապագայի մը մէջ, տէրութիւնք պիտի հարկադրին համակերպիլ : Միանգամայն իւրաքանչիւր տէրութեան հետ բանակցութիւնք սկսած են այնպիսի խնդրոց նկատմամբ զորս Բ · Դուռը, նոյն անկախական ոգւով կը ջանայ կարգադրել : Այսպէս մեծ հաստատամտութիւն ցոյց կուտայ աւետրական դաշնագրոց վերաբերեալ բանակցութեան համար, և հաստատ կամք՝ անոնցմէ ազատելու : Բ · Դուռը պատրաստ է ամեն զոհողութեան, որպէսզի օտար տէրութիւնք պատրուակ չգտնեն նորանոր վէճեր յարուցանելու :

Բեդրոպուրկէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ Լուսինեան իշխանն՝ որ համբաւաւոր է Կիպրոսի թագաւորութեան թեկնածութեամբն և Ռուսիոյ ծառայութեան մէջ կը գտնուէր, յուլիս 7ին մեռեր է 77 տարեկան :

Լա Թիւրքի կ'իմանայ թէ այլևայլ վարչութեանց նամակներն ու ծրարներն այսուհետև ձրիաբար չպիտի ուղարկուին Թղթատարութեան միջոցաւ, որպէս կը լինէր ցարդ : Առևտրական նախարարութիւնը շըջաբերականաւ ծանոյց կուսակալաց և գաւառական վարչութեանց թէ՝ այդ ծախուց համար մասնաւոր գումարներ յատկացեալ են ներկայ տարւոյ ելմտացոյցի մէջ, և թէ այսուհետև իւրաքանչիւր վարչութիւն այդ գումարով պէտք է վճարէ իւր Թղթատարական ծախքերը :

Պաղտատի նախապատրաստական դըպրոցին ուսումնաւարտ աշակերտք մայրաքաղաքս եկան, Բանկալթիի զինուորական վարժարանը մտնելու համար :

Ինչպէս երկուշաբթի գրած էինք, կը հաստատուի այն լուր թէ Սև ծովու ափական եղերաց մօտ գտնեալ ծովահէնք երեւան ելեր են · ասոնք վերջին օրերս թալեր են Պաթումէն մայրաքաղաքս եկող երկու մետաքսաբարձ առագաստանաւեր : Նաւաստիք չեն կըրցեր դիմադրել, վասն զի ծովահէնք թուով 20 էն եղեր, յոտից ցգլուխ զինեալ, և արագասահ փոքր Նաւերով : Յայտնի չէ թէ ծովապատակք ինչ ազգէ են :

Մուսուլի ռուսական հիւպատոս Պ. Քարձօֆ՝ որ ժամանակէ մը հետէ Բանկալթիի հիւանդանոցը կը գտնուի, տեսնելով որ վէրքերն հետզհետէ ծանրանալու վրայ են, շաբթուս մէջ Վիէննա ուղևորեցաւ, զինքը դարմանող բժիշկներէն միոյն ընկերակցութեամբ · Պ. Քարձօֆ Վիէննայի հաչակաւոր Տօքթ. Պիլրօթի հիւանդանոցը պիտի մտնէ :

Անցեալ օր ծանուցինք թէ Ղալաթիոյ մաքսատան ընդհանուր քըննիչ Պ. Բիւսքէլ հրաժարելով, Գերմանիա կուղևորի : Այս հրաժարման պատճառները սապէս կը պատմուին :

Գերմանացի պաշտօնեայն կուզէր տեսակ մը հսկողութիւն հաստատել, որ պարագային յարմար կը թուէր իրեն, բայց մաքսատան տեսչութեան խորհրդական Պէրթրամ էֆէնտի համամիտ չգտնուելով, Պ. Բիւսքէլ անպատշաճ խօսքեր արտասանեց : Յայնժամ Պէրթրամ էֆէնտի իրողութիւնը Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան յայտնեց, և Պ. Բիւսքէլ հրաւիրեցաւ հրաժարական տալ և իւր երկիրը վերադառնալ :

Սօֆիայէն կը հեռագրեն թէ Կ. Պոլսոյ պուլկարական Նորընտիր գործակատար Պ. Կէրօֆ կը պատրաստուի եղեր Կ. Պոլիս ուղևորիլ, բայց Նախարարական աղմկալին պատճառաւ հարկադրեր է յետաձգել իւր ուղևորութիւնը : Կը կարծուի որ արդի Նախարարութիւնը Նոր գործակատար մը առաջարկէ Բ. Դրան :

Յուլիս 11 թուով կը հեռագրեն ատ Բօլիթիչէ Քօրէսբօնտէնց թէ Սերպիական դեսպան Պ. Կրիւիչ հըրահանգ ընդուներ է վերստին խընդրել Բ. Դրնէն որպէս զի սերպո-թուրքական սահմանագլխոց միացման կէտը վերջնապէս ճշդելու համար պատուիրակներ ղրկէ տեղական յանձնաժողովոյն :

Երէկ պատմեցինք համառօտիւ յունաց պատրիարքի ընտրողական Ժողովոյ կիրակի աւուր նիստն : Մայրաքաղաքիս յունարէն լրագիրք անոր մանրամասն նկարագրութիւնն ըրած են, ուսկից կերևի թէ ժողովոյ ծըրագրի առաջին մասի աշխատութիւններն յաջող կերպով ի գլուխ հանելու համար պէտք եղած համաձայնութիւնը չկրցեր անդամոց մէջ : Պատրիարքական տեղապահն՝ որ կը նախագահէ ժողովոյն, չունի այն բարոյական ազդեցութիւնն և կարողութիւնը որ անհրաժեշտ են ժողովոյ կարգապահութեան հսկելու և խորհրդարանական կանոնաց ճշտութիւնը պահելու համար : Կիրակի աւուր Նստին մէջ, առաջին անգամ որ միջադէպ մը պատահեր է, Տ. Ագաթանգեղոս զանգակն հնչեցունելով, դիւանէն վար իջնալ ուզեր է, բայց թող չեն տուեր : Նոյն իսկ այդ առաջին Նստի քուէարկութիւնը կատարեալ խառնաշփոթութեան մը մէջ տեղի ունեցեր է, ժողովականաց ոմանց մեկնելէն յետոյ : Կերևի թէ Նոյն օրն յաղթանակը՝ Սինոդին և խառն ժողովոյ կուսակցութեան կողմն մնացեր է, սակայն տակաւին ստոյգ մեծամասնութիւն ունենալու չափ կուսակցութիւնք չեն կազմուած :

Ասասիկ կիրակի աւուր Նստին մէջ քուէարկեալ բանաձևին օրինակն ·

«Ժողովս իրեն վերապահելով Ս. Սինոդին և Պատրիարքարանի ազգային ժողովոյ կողմէ չվաւերացեալ ընտրութեանց վրայ վճռաբանելու և որոշում տալու իրաւունքը, կորոշէ անցնիլ օրակարգին »:

Չէքմէճէի Մըկլթին վրայ եղած յարձակման պատճառաւ, զոր պատմեցինք Նախորդ թուով մը, քաղաքապետութեանը 15 ոստիկան ղըրկած է այն կողմերը բարեկարգութեան հսկելու համար : Էքսբրէս կը դիտէ թէ այսքան փոքր թուով ոստիկանք անբաւական են բնակչաց անդորրութեան համար, և թէ գունդ մը կանոնաւոր զօրաց առաքումն հարկաւոր է :

Կրետէի ազգային ժողովոյ նստաշրջանի փակումը գրած էինք : Նորագոյն տեղեկութիւնք կ'իմացնեն թէ ժողովոյ վերջին նիստերն յոյժ աղմկայոյզ եղեր են, մանաւանդ այն նիստն ուր գաւառին վարչական խորհրդոյ անդամոց ընտրութիւնը կատարուեր է, վասն զի այդ պաշտօնին ցանկացող բազմաթիւ ընտրելիք կան եղեր : Քանի մը օրինական ծրագրեր քուէարկուեր են որք նպաստաւոր պիտի լինին երկրին, եթէ վաւերացուին կայսերական կառավարութեան կողմէ :

Գարատաղի գաւառակաց և գիւղօրէից մէջ նախակրթարաններ և երկրորդական վարժարաններ հաստատելու շարժում մը կը տեսնուի : Դատական, վարչական և ելմտական պաշտօնատանց իրաւասութիւնները ճշդող կանոնագիր մը պատրաստուելու վրայ է : Բայց բուն բովանդակ նշանակութեամբ սահմանադրութիւն մը չպիտի տրուի երկրին, այլ երեք տարին մի անգամ, ընդհանուր ժողով մը պիտի գումարի, խորհրդատու ձայնիւ : Երեք չորս վաշտ մնայուն զօրք կազմուեր է, հրետաններով և հեծելազօրք, որք Նիքշիչի, Անթիվարիի և Տիւլչինեօի պահպանութիւնը պիտի ընեն :

Թրիէստի թղթաբեր շոգենաւն այս գիշեր եւրոպական ժամը 7ին անցաւ Տարտանէլէն :

Անցեալ շաբթու 15 հոգիէ բաղկացեալ աւազակաց խումբ մը Գասըրքիւղէն մէկ ժամ հեռու Պ. Քօրբիի ագարակը կոխելով պահապանները կապեր, և բաւական բան կողոպտելով, մեկներ են առանց մէկէ արգիլուելու :

Ֆար կը պատմէ թէ Թօբզաբուցի Օգսէն անուն անձ մը նախընթաց օրը տեղւոյն ոստիկանութեան դիմելով, յայտներ է թէ Ահարոն անուն անձը դանակով վիրաւորած էր զինքը, և արդարև կողէն բաւական վէրք մը բացուած էր և արիւն կը հոսէր :

Ոստիկանք Ահարոնը ձերբակալեցին, բայց սա ափ ի բերան մնաց այսպիսի զըրպարտութեան մը առջև, և յայտնեց թէ Օգսէն ինքզինքը վիրաւորած էր, գինովութեանը ժամանակ :

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

(Այս օրուան)

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

Աղէքսանդրիա 14 յուլիս

Այսօր քոլերայէն մարդ մը բռնուեցաւ աստ :

Մարսիլիա, 15 յուլիս

39 հոգի մեռան քոլերայէն երէկ իրիկուընէ ի վեր :

Թուլոն, 15 յուլիս

13 հոգի մեռան քոլերայէն երէկ իրիկուընէ ի վեր :

Մարսիլիա, 15 յուլիս

Առաւօտէն ի վեր 30 հոգի մեռան քոլերայէն :

Յուլիս 15 ին մեռնողներուն գումարն է = 69 :

Թուլոն, 15 յուլիս

Առաւօտէն ի վեր 7 հոգի մեռան քոլերայէն :

Յուլիս 15 ին մեռնողներու գումարն է = 20 :

Պրիւսէլ, 15 յուլիս

Ծերակոյտի 10 անդամոց համեմատական մնացած ընտրութիւնն հետևեալ արդիւնքն ունեցաւ :

Ի Պրիւսէլ ազատական 8 ընտրելիք ընտրեցան · կաթոլիկ կուսակցութիւնն աթոռ մը կորոյս :

Ի Նիվէլ ազատական ընտրելին ընտրեցաւ :

Ի Թուրնէ կաթոլիկ ընտրելին ընտրեցաւ :

Այս ընտրութեանց վրայ կաթոլիկ կուսակցութիւնը Ծերակոյտին մէջ 17 ձայնի մեծամասնութիւն մը ստացաւ :

Դիտելի է որ այժմ Պրիւսէլ երեսփոխանական ժողովոյ մէջ կաթոլիկ ներկայացուցիչներ ունի և Ծերակոյտի մէջ ազատական :

ԴՐԱՄԱԿԱՆ

ԳԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 4 Յուլիս

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ (պահանջի) ...	110 1/2
3 » » » (վճարկին) ...	110 1/8
3 » Բարիզի » (պահանջի) ...	22 85
3 » » » (վճարկին) ...	22 92 1/2

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Օսմանեան Քօնսօլիտէ

Երէկ երեկոյ գոցուեցաւ ...	ղրշ.	8 22 1/2
Պօրսային գոցուելէն վերջը ...	»	8 22
Երէկ Բէրայի մէջ ...	»	— —
Առաւօտուն բացուեցաւ ...	»	8 23
Բարձրագոյն գին ...	»	8 23
Նուազագոյն ...	»	8 22 1/2
Կէս օրին ...	»	8 22 1/2
Փոխառութիւն 1863 ...	Ֆր.	54
» 1865 ...	»	49
» 1869 ...	»	44
» 1873 ...	»	39
Պօն տիւ Թրէզօր ...	Անգլ. Լր.	16 25
Րումէլիի երկաթուղի ...	Ֆր.	43
Օպլիկասիօն տը Բրիօրիթէ ...	»	367
Բաժնեթուղթ Լաւրիօմի ...	»	83

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

Սօսիէթէ Ժէնէրալ ...	Անգլ. Լր.	3 22
Քրէտի Ժէնէրալ (Գ. Կ.)	Օսմ. Լր.	6 36
Պանք տը Գօնս ...	«	5 20
Սօս. Շանժ է վալէօր ...	Օսմ. Լր.	3 27
Թրամուէյ ...	» »	292 1/2
Իւնիֆիէ եգիպտական ...		64 25
Երէկ իրիկուն գոցուեցաւ ...		65 20
Գիշերը գործ չեղաւ ...		— —
Այս առտու բացուեցաւ ...		64 22 1/2
Կէս օրին նոյն գին ...		65 20

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի ...	ղրշ.	100
20 ֆրանքնոց ...	»	87 26
Անգլիական ոսկի ...	»	110 6
Քրիմեց ...	»	51 42
Բոլ իմբէրիալ ...	»	90 5
Ռուսլի թղթադրամ ...	»	9 01
» արծաթ ...	»	89 30
Ֆիօրին ...	»	9 2
Մէճ. արծ. (տպըր.) ...	»	108 10
Հինգնոց ...	»	102 10
Մէթալիք ...	»	98
Պղինձ ...	»	780
Թղթադրամ ...	»	2600
Վեցնոց ...	»	103 5

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 15 Յուլիս ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսօլիտէ գոցուեցաւ ...	100 9/16
Օսմ. » բացուեցաւ ...	7 11/16
» » գոցուեցաւ ...	7 3/4
Օսմ. փոխառութիւն 1865 ...	10 1/8
» » 1869 ...	8 7/8
» » 1871 ...	66 1/2
» » 1872 ...	15
» » 1873 ...	7 3/4
Փոխառութիւն 1877 ...	78 1/2
Պանք Օթօման ...	13 1/2
Ռուսական փոխառ. 73 (գ. կ.) ...	90 5/8
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ) ...	59 5/8
» առանձն. (բրիվիլէժիէ) ...	83 5/8
Տայրա Սանիէ ...	59
Տօմէնիալ (փոխառ. Րօչիլտ) ...	83 1/2
Հունգարական պարտաթուղթ 1877 ...	100 5/8
Փոխանակութիւն Բարիզի վրայ ...	25 386

Վիէննա, 15 Յուլիս ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ ...	122
Օսմանեան երկաթուղի ...	20 20

Բարիզ, 15 Յուլիս ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 % ... բաց	107 12 1/2
» » 3 % ... բաց	76 47 1/2
Օսմանեան քօնսօլիտէ բացուեցաւ ...	7 75
» գոցու. (գ. կ.)	7 87 1/2
Օսմանեան փոխառութիւն 1863 ...	—
» » 1865 ...	51
» » 1869 ...	43
» » 1873 ...	39
Օսմանեան երկաթուղի ...	42
» Րէժիի բաժնեթուղթք ...	539 37 1/2
Պանք Օթօման ...	591 25
Գրէտի Լիօնէ ...	533 75
» Ֆօնսիէ ...	1270
Բաժնետոմս Լիոնի (դուբ. կոր.) ...	1187 50
Սուէզի ջրանցք ...	1895
Ռուսական 5 % 1877ի ...	95 1/4
Իտալական Ռանթ ...	92 92 1/2
Արևելեան Ռուս. (Ռիւս Օրիան.) ...	—
Եգիպտական միացեալ գոց (իջած) ...	301 25
Սպանիական (արտաքին) ...	57 3/8
Բրիօրիթէ Թիւրք ...	365
5 % Հելլենական ...	345
Չէք Լոնտրայի վրայ ...	25 16

ՄԵՏԵՕՐԱԲԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԱՆ Ի ԲԵՐԱ

16 Յուլիս (Ն. Տ.)

	Ժ. Վ.
Ծագումն Արեգական (Աւերեւոյթ) ...	4 44
Մուտք » » ...	7 28
Կէս օր (Միջին ժամով) ...12...	5 42
Կէս օր (ժամ ըստ Տաճկաց) ...	4 25
Ծագումն Լուսնի (Աւերեւոյթ) ...	— —
Մուտք » » Երեկոյ ...	12 58
Երեւումն Լուսնի Վ. Ք. 15 Յուլիս ...	

Առաւօտեան ժամը 8ին

Ծանրաչափ (Ծովու երես) ...	762 8
Ջերմաչափ ...	24 1
Նուազագոյն աստիճան ...	17 1
Բարձրագոյն » ... երեկուան ...	27 2
Խոնաւութիւն % ...	54
Բարձրութիւն անձրևի 30 ժամու միջոցին հազարորդամետր ...	0

Ուղղութիւն հողմոյ հիւսիս արևմ. յոյժ տկար :

ՅՈՒԼԻՍ 15 ԻՆ ՎԻՃԱԿԸ

Ծանրաչափը թեթև մը իջած է, բայց միակերպ է Եւրոպիոյ հարաւային կողմը և Միջերկրականի վրայ · հովը փոփոխական և տկար է Միջերկրականի և Ադրիականի վրայ · Հիւսիսային հովը չափաւոր կամ յոյժ զօրաւոր է ի Տարտանէլ · Հանդարտ օդ յՕտեսա ·

Բարեխառնութիւնն է 27 աստիճան ի Պէրութ, 23 յՕտեսա, 19 ի Բարիզ և 17 ի Բեդրպուրկ ·

ՎԱՆՔ ԵՒ ՎԻՃԱԿ

Ազգային Սահմանադրութիւնն հաստատուելէն յառաջ այդ երկու անուանք մի և նոյն մատակարարութիւն կը ցուցընէին : Սակայն մեր եկեղեցւոյ առաջին և լաւ ժամանակաց մէջ մինչև չորս հարիւր վիճակք կը համրուէին և իւրաքանչիւրին գլուխը մի մի եպիսկոպոս կը գտնուէր · և երբեք մեր հին մատենագրութեանց մէջ չենք կարդար առաջնորդ Բագրեւանդայ կամ առաջնորդ Ամատունեաց, կամ ասոնց նման բացատրութիւններ : Վանքերուն գլխաւորներուն ալ սովորաբար առաջնորդ սուրբ ուխտին Գլակայ կամ Հաղբատայ կամ նմանօրինակ անուանակոչութիւններ կուտային :

Ս. Ներսէս Շնորհալի իւր Ընդհանրականին մէջ տարբեր գլուխներ ունի «Առաջնորդաց սրբոց ուխտից վանականաց» և «Առ առաջնորդս եկեղեցւոյ որ են յաշխարհի որ կոչին եպիսկոպոսունք» :

Ուրեմն ի սկզբանէ վանահայրն ու եպիսկոպոսն տարբեր անձեր եղեր են, սակայն վերջերը միացեր են, և այդ միացման բարձումը մեր օրով եղած բան մի է, և այն ալ տակաւին ընդհանրացած չէ · որովհետև Լիմայ, Կտուցայ, Ձըրնքուչի, Արգնոյ, Բասենոյ, Պալաբիտու առաջնորդք իսկապէս վանահայրներ են և միանգամայն ժողովրդեան տեսուչներ, թէպէտ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը ոմանք ունին և ոմանք ոչ :

Սահմանադրութեան յառաջ բերած բաժանումը արդեամբ օգուտ մը յառաջ բերած չլինելուն, այսօր շատեր վանքերը ու վիճակները միացնելու գաղափարը յըղացած են :

Անուրանալի է որ վանքերու և վիճակներու բաժանման հետևանքները ձախող եղած են, և միայն քանի մի գլխաւորները յառաջ բերելու համար կը յիշեմք ·

Թէ վանքերու և վիճակներու մէջ դըժտութեանց որմներ ցանուեցան առանց պատճառի :

Թէ վիճակները զրկուեցան վանական վարդապետաց հոգևոր ծառայութիւններէն :

Թէ վանքերու մատակարարութիւնք անդլուխ և առանց հսկողութեան մնացին :

Թէ առաջնորդք առանց օգնութեան և առանց կանոնաւոր հասութի նեղութեանց ենթարկուեցան :

Թէ վերջապէս հասանք այն ցաւալի կէտին յորում այսօր կը գտնուիմք, որ վանքեր առանց վանահօր և վիճակներ առանց առաջնորդի մնացած են · և անպաշտօն եպիսկոպոսունք և վարդապետք ժամտախտէ փախչելու պէս գաւառական պաշտօններէ կը խորշին :

Անոնք որ կը յիշեն որ ժամանակաւ այդ անտեղութիւնք չէին ճշմարտուէր, կ'առաջարկեն պարզապէս առաջնոյն դառնալ և վանք ու վիճակ միաւորել :

Ատանօր պէտք է որոնել թէ բաժանումն անխորհուրդ որոշումէ՞, թէ անհըրաժեշտ հարկէ յառաջ եկաւ արդեօք :

Ձեմք կարող անխորհուրդ որոշման դատապարտութիւնը վճռել վանքերը վիճակներէ բաժնողներուն դէմ, որք մեզ նման և մեր չափ ազգասէր և բարեսէր անձինք եղան և որոշումներն ալ ժողովոց հաւանութեամբ տրուեցան :

Ազգային Սահմանադրութիւնը իւր առջի տարիներուն մէջ աւելի գրաւած էր ամեն ազգայնոց ուշն և սիրտը քան այսօր, և այն ատեն ամեն սահմանադրական պահանջում անվիճապէս ընդունելի էր, և վանքերու բաժանումն ալ այդ տեսակէն էր :

Երբ վանք ու վիճակ միացեալ էին, առաջնորդը վանքին մէջ կը բնակէր իւր միաբանութենէն շրջապատեալ · և վանականաց խորհրդով և գործակցութեամբ ամեն բան կը կատարէր, իսկ ժողովրդական տարրը ո՛չ նշանակութիւն ունէր և ո՛չ գործոց մէջ դեր մը :

Սահմանադրութեամբ գլխաւոր քաղաքին մէջ ազգային ժողովներ հաստատուեցան, եւ թեմական կառավարութեան կեդրոնն ալ վանքէն դուրս ելաւ · ընտրութեանց ժամանակն ալ վանքն ու վիճակն անհամաձայն գտնուեցան, վասն զի մին վանքին յարմար գլուխ մի կ'ուզէր և միւսն ալ վիճակին յարմար · թէ ընտրութեան իրաւունքը, թէ ընտրողութեան ձևը և թէ ընտրելութեան պայմանները երկու կողմէն անհամաձայն մնացին · և ահա այդ գործեան հանգոյցը լուծելու հարկն էր, որ Կեդր · Վարչութիւնը ստիպեց աղեքսանդրեան հատումը գործածել և վանքը վիճակէն կարել բաժնել :

Անտարակոյս պէտք է լինիմք որ անցած անտեղութիւնները մոռցած լինելնիս, անոնց բարձուած լինելը չցուցներ · և երբ վերջին անտեղութիւններէ չփութած առաջիններուն կը դառնամք, խնդիրը պարզած չեմք լինիր, այլ օր մի վերստին առաջիններէն ձանձրացեալ երկրորդներուն դառնալու վտանգի մէջ կ'իյնամք :

Ուստի փոխանակ հապճեպ առաջիններուն դառնալու, խնդիրը լաւ ուսումնասիրեմք և ամեն կողմով քննեմք :

Այսօր վանահայր առաջնորդներ ունիմք տակաւին քանի մի տեղ ինչպէս վերը յիշեցինք, սակայն պէտք է գիտնալ թէ այն տեղերը ո՛չ սահմանադրութիւն գործադրուած է և ո՛չ ազգային Վարչութիւն հաստատուած : Ամենայն ինչ նախկին նահապետական դրութեամբ կը յառաջէ և ժողովուրդն չվայելեր այն ազգային իրաւունքները, զորս մեք այնչափ կը սիրեմք, և զորս անարգելու և խափանելու երբեք կամք չունիմք : Վանայ ժողովուրդն ալ նոյնպէս էր Վարագայ վանքէն չզատուած · Մշոյ ժողովուրդն ալ՝ նոյնպէս էր Ս · Կարապետէն չզատուած, և այսպէս ուրիշ տեղեր ալ : Խնդիրներ տեղի չունենալու համար երկու պայման պէտք է · կամ պէտք է որ վանքը աննշան լինի և վանական միաբանութիւն չունենայ որ վիճակին ձեռքին տակ մնայ, կամ պէտք է վիճակի մը արդիւնքն ժողովուրդն և ազգութիւնն աննշան լինի որ վանքին ձեռքին տակ մնայ : Այսպէս եղած է ցարդ · սակայն այդ ալ օգտակար չէ եղած : Վիճակի ձեռքին տակ մնացող վանքեր անբեր և ապարդիւն և զրեթէ կիսակործան մնացած են · իսկ վանքին ձեռքին տակ մնացած ժողովուրդներ նոյնպէս անյառաջդէմ և կիսաւեր վիճակի մէջ և սահմանադրութեամբ իրենց բացուած կեանքէն բոլորովին անմասն մնացած են :

Այսօր մեք նախընտրութիւն ընելու համար մեծ շփոթ կ'զգամք, և ոչ վանքերը ժողովուրդին, և ո՛չ ժողովուրդը վանքերուն զոհել յանձն կ'առնումք :

Գործոյն տնտեսագիտական կողմն ալ կայ զոր պէտք չէ անարգել : Ամեն ազգի ոյժը իւր հասոյթներն են · և որչափ միջոցներ կը շատցնէ այնչափ ալ յառաջդիմութիւն կարող է շատցնել :

Մեր ազգին հասութից աղբիւրներն ալ երկու են · վանք և վիճակ · վանքն իբր հասոյթ կը ներկայացնէ մեզ վանական հողերը, անասունները և պտուղները · իսկ վիճակն ալ իբր հասոյթ կը ներկայացնէ ժողովուրդէն բղխած տուրքերը, իրաւունքները, նուէրները, և զորս գանազան անուններով և պատճառներով կը գանձեն առաջնորդք և գաւառական արկեղք :

Այդ վանքերն ընդհանուր ազգին սեփհականութիւնք են, և ընդհանուր ազգին յատուկ արդիւնք մը պէտք է արտադրեն, կրթական կամ բարեգործական հաստատութիւններ լինելով · իսկ երբ գաւառական կամ վիճակային մատակարարութեանց ձեռք կը մնան, ուրիշ արդիւնք չեն ունենար, եթէ ոչ ժողովուրդէն բղխելիք հասոյթը նուազեցնել և անոր թերին լրացնել :

Տնտեսագիտական առողջ սկզբանց հակառակ է հասութից աղբիւրները այնպէս կարգաւորել, որ փոփոխակի զիրար չափաւորեն և ընդհանուր օգուտը և շահը նուազեցնեն :

Փորձառութիւնն ալ կը ցուցնէ որ վանք ու վիճակ միացեալ եղող գաւառներ, թէ՛ յառաջադիմութիւնը նուազ է թէ՛ միջոցները սակաւ, և չեմք կարող Լիմն ու Կտուցը, Ձնքուշն ու Բասենը իբր լաւագոյն դիրք ունեցող վիճակ նկատել և գովութեամբ յառաջ բերել :

Մեր տուած բացատրութիւնք խնդրոյն մէկ կողմն քննեցին, և ընթերցողը կարող եղեւ հասու լինել թէ մեր տեսութեամբ ո՛չ վարչագիտական և ո՛չ տնտեսագիտական սկզբունք չեն յորդորեր հապճեպ շտապով վանքերու և վիճակներու միաւորութեան դառնալ :

Սակայն մեք իսկ չեմք ուրանար որ բաժանումէ յառաջ եկած փոփոխ մրցմունք, ընդդիմութիւնք, դիմամարտութիւնք, դժտութիւնք և թշնամութիւնք պէտք չէ մտադրութենէ վրիպին, և այդ անտեղութեանց պատճառ եղող բաժանումն ալ պէտք չէ պաշտպանուի : Բայց կատարեալ բաժանման և կատարեալ միաւորութեան դրութիւնները, երկուքն ալ ծայրայեղ են, և ասոնց երկուքին մէջ փոփոխ յարաբերութեան դրութիւն մըն ալ կայ, որ ըստ մեզ կարող է ծայրայեղ դրութեանց թէ՛ անտեղութիւնները բուժել թէ՛ օգուտները արտադրել · սակայն այսօր հնար չէ այդ կէտին բացատրութեան մտնել, այլ մօտ թերթերէ մէկուն մէջ նորէն մէկ երկու սիւնակ գրաւելու կը դառնամք :

ՏԻՐԱՅՐ

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏ ՄԸ

Բոլոնիական կարկանդակ ([illegible]) պատրաստելու կերպ :

Առ մէկ քաշ սերախառն կոչուած պանիր, 200 կրամ հացի փոր, 15 կըրամ շաքար, երեք հաւկիթ, քիչ մը սեր, 125 կրամ չամիչ, մշկահոտ ընկոյզ ([illegible]) և քիչ մը աղ : Ամբողջը լաւ մը խառնէ, քիչ մը ալիւր դիր և մաս մաս բոլորէ · ապա այդ կտորները տափարակելով կարագի մէջ խորովէ և կունենաս բոլոնիական քաղցրահամ կարկանդակն :

Ընթերցողք անշուշտ գոհութեամբ պիտի տեղեկանան թէ հանգուցեալ ճարտար Ատամնաբոյժ Պ. Տօրինեի, բազում տարիներէ ի վեր իւր քովն առած և իւր արհեստին բնտելացուցած էր իւր որդին, որ նոյնպէս Բարիզի բժշկական վարժարանէն վկայեալ ատամնաբոյժ է : Հետևաբար այդ բարեգործ և հանրածանօթ վարպետին մահէն յետոյ, մայրաքաղաքիս հասարակութիւնք պիտի կարենայ օգտիլ նորա որդւոյն Պ. Տօրինեիի հմտութենէն :

Պ. Տօրինեի՝ ըստ առաջնոյն պատրաստ է իրեն դիմող հիւանդները դարմանել, իւր տան մէջ, Բերա, Ասմալը Մեսճիտ փողոց, թիւ 17, ամեն օր Եր. առաւօտեան ժամը 9էն մինչև երեկոյեան ժամ 5 :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՊՈԼՍՈՅ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ 23—30 ՅՈՒՆԻՍ

ՑՈՐԵՆ. — Հրապարակը իւր առջի շաբթուան հանդարտութեան մէջ կը շարունակէ, բայց գները անշարժ են պատրաստից նուազութեան համար։ Հասաւ 15,000 գրիւ կակուղ ցորեն, 5,000 գրիւ կարծր ցորեն։ Վաճառեցաւ 5,000 գրիւ կարծր ցորեն 15,000 գրիւ կակուղ և 5,500 գրիւ կիրգա։ Պատրաստ 15,000 գրիւ կակուղ ցորեն։

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ. —Այս շաբթու այս ապրանաց վրայ կարեւորութեան արժանի որ և իցէ գործ չէ եղած թէ վաճառաց պակասութեան և թէ գնորդաց նուազութեան պատճառաւ որով և գները փոքր ինչ տկար են։

ԳԱՐԻ.— Տեղական սպառման համար 8,000 գրիւի մօտ վաճառմունք եղան ի գին 12-12¾ ղրշ. գրիւը. գրոփ համար 12 ղրշ. կառաջարկուի առանց գործի։

ՁԱՒՏԱՐ. —Ի գին 13 ղրշ. գրիւը դրանսիդով բաւական թուով գնողներ կան հրապարակին վրայ բայց վաճառք կը պակսին։

ԼՈՒԲԻԱ. —Այս ապրանք լաւ կերպով կը պահանջուին, լաւ գներով, բայց պատրաստից նուազութեան պատճառաւ գործ չլինիր։

ԲԱԿԼԱ.— Այս ապրանքին վրայ մեծ գործ չկայ, գի պատրաստ ապրանք կը պակսին։

ՍԻՍԵՌՆ. —Պահանջը կարի անշան է որով և գներ անկեալ։ 40 փարայի օխան վաճառողներ կան առանց գնորդաց։

ՔԹԱՆԱՀՈՒՆՏ. —Գները անշարժ են նշանակելի նոր գործ մը տեղի չէ ունեցած գի ապրանք կը պակսին։

ՍՈՒՍԱՄ. —Թէ շրջակայից և թէ Մէրսինի ապրանաց վրայ լաւ պահանջ մը կը տիրէ, բայց վաճառք կը պակսին. գները հաստատ են։

ՔԱՆԱՐԵԱ ԵԷՄԻ. —Պահանջը տկար բայց գները լաւ բռնուած են։

ՔԷՆՏԻՐԻ ՀՈՒՆՏ. —Նշանակուելու կարեւոր բան մը չկայ։

ԱՖԻՕՆԻ ՀՈՒՆՏ. —Մօտերս այս տեսակին վրայ գործողութեանց սկիզբ մը կը յուսացուի։

ԱԼԻՒՐ

Այս ապրանքին վրայ բացարձակ հանդարտութիւն մը կը տիրէ առանց գնորդի թէև, բայց գները բռնուած են։ Վաճառեցաւ այս շաբթու 18,000 պարկ։ Պատրաստ կայ 25,000 պարկ, որոնց 6,000 պարկը Օտէսա, 8,000 Պրայլա, 11,000ը տեղական։

ԳԱՂԹԱԲԵՐՔ

ՇԱՔԱՐ. —Հասաւ 4,080 պարկ։ Վաճառեցաւ 2,800 պարկ։ Պատրաստ 5,280։ Հրապարակը հաստատ է գի այս շաբթուան գալիք ապրանք գառանթինա կը սպասեն։ Գները բռնուած են։

ԽԱՀՈՒԷ. —Հասաւ 1,300 պարկ։ Վաճառեցաւ 800 պարկ։ Պատրաստ 4,500 պարկ։ Այս շաբթու գործերը լաւ էին և վաճառմունք եղան հաստատ գներով։

ԲՐԻՆՁ. —Հասաւ այս շաբթու 2,000 պարկ Անգղիական։ Վաճառեցաւ 1,500 պարկ Անգղիական և 300 պարկ Իտալական։ Պատրաստ 5,000 պարկ Անգղիական և 400 պարկ Իտալական։ Այս շաբթու լաւ վաճառումներ եղան թէ իտալականաց և թէ անգղիականի հաստատ գներով. Իտալական չհասաւ այս շաբթու գի Իտալական շոգենաւը գարանթէնի բռնուած է։

ՄՈՄ. —Հասաւ 2,500 սնտուկ Վաճառեցաւ 2,500 սնտուկ։ Պատրաստ ոչինչ։ Պահանջը լաւ է, և գները խիստ հաստատ եկած վաճառք ծախուեցան 7¾ ղրշ. գիլօն։

ՔԱՐԻՒՂ. —Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 8,000 սնտուկ և 200 տակառ ու 2,000 սնտուկ Ռուսական։ Պատրաստ 28,000 սնտուկ Ամերիկայի և 1,000 վարիլ ու 22,000 սնտուկ Ռուսական։ Հրապարակը բաւական բանուկ է, պահանջը լաւ է Ամերիկայի տեսակաց համար որոց գները բռնուած են Ռուսական կը վաճառին գնոց աժանութեան համար։

ԱՊԱԿԻ. —Հասաւ 2000 սնտուկ։ Վաճառեցաւ 1,000 սնտուկ։ Պատրաստ 17,500 սնտուկ։ Հրապարակը բաւական բանուկ է, բայց գները թոյլ են։

ՊՂՊԵՂ. —Այս շաբթու 500 պարկ հասած ըլլալուն համար գները թուլցան։

ՈԳԻ

ԱԼՔՈԼ. —Հրապարակը անգոյն վիճակի մէջ, սահմանափակ գործերով։ Գները անշարժ են։ Հասաւ 86 տակառ։ Վաճառեցաւ 100 տակառ։ Պատրաստ 250 տակառ։

ՌՈՄ. —Այս շաբթու գործառնութիւնք կարեւորութենէ զուրկ էին, գները անփոփոխ են։ Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 100 տակառակ։ Պատրաստ 300 տակառակ։

ՄԵՏԱՂՔ

ԵՐԿԱԹ. — Եւրոպայի հրապարակաց վրայ կարեւոր փոփոխութիւն մը տեղի չէ ունեցած։ Հրապարակնիս իւր հանդարտութիւնը անցուց և այս շաբթու բաւական շարունակութեամբ գործեր եղան անփոփոխ գներով։ Այս շաբթու 500 թօնօ եկաւ։ Վաճառմունք 550 թօնօյի կը հասնին։

ԱՆԱԳ.— Հասաւ 80 տակառակ։ Վաճառեցաւ 50 տակառակ։ Պատրաստ 180 տակառակ։ Բաւական վաճառմունք եղած են այս շաբթու թոյլ գներով։

ՉԷԼԻԿ.— Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 100 սնտուկ։ Պատրաստ 3,500 սնտուկ։ Հրապարակը հանդարտ էր այս շաբթու և գները անփոփոխ։

ԳԱՐՖԻՑԱ.— Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 1000 տակառակ։ Պատրաստ 30,000 տակառակ։ Հրապարակը հանդարտ է տկար գներով։

ԹԷՆԷՔԷ.— Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 200 սնտուկ։ Պատրաստ 200 սնտուկ։ Վաճառմունք լաւ էին այս շաբթու հաստատ գներով։

ՃԻՆԿՕ.— Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 250 տակառակ։ Պատրաստ 1,300 տակառակ։ Հրապարակը հանդարտ է անփոփոխ գներով։

ՄԱՆԻՖԱԹՈՒՐԱ

ՄԱՀՈՒՏԻ. —Շաբթուս նշանակութեան արժանի գործ չէ եղած այս տեսակին վրայ բաց ի մանր մունր վաճառումներէ տկար գներով։

ԼՈՆԿ ԳԼՕԹ. —Այս շաբթու վաճառմունք չեղան գները կարի թոյլ են։

ԵԷԼՔԷՆ ՊԷԶԻ. —Մաս մը պատրաստ երկրորդականք վաճառեցան ի գին 4^{12}-4^{15} լիպրան։

ԽԱՄ ԱՍԹԱՐ. —7 և 8 լիպրանոց և 40—44 ինչէղոց տեսակաց պահանջը զօրաւոր է, բայց ապրանք չգար գի Մանչէսթրի գները չաւ չէն ձգեր։ Փոքր ինչ 9 լիպրանոց ապրանք վաճառեցաւ ի գին 61 ղրշ. ծրարը։

ԹԻՆՃԻՖ. —Այս շաբթու անփոփոխ գներով առաջին ձեռքէ մի քանի հարիւր ծրար վաճառեցան։

ՊԱՍՄԱ. —Այս շաբթու վաճառուած տեսակներն են՝ Բաց և թուխ գոյներով գրէթօն ալ էնչիլ։ Բէյմալէ միագոյն և գունաւոր, մօր, և ուրիշ բաց գոյներով նոր տեսակներ։ Տեղական սպառման համար ծանր տեսակ բէզմէններու և ճերմակներու վրայ բաւական գործեր եղան։

ՄԱՆՃՈ. —Շաբթուս գործերը շարունակեցին բայց ոչ այնչափ լաւ կերպով որչափ անկից մի քանի շաբաթ յառաջ։ Պահանջը միշտ փաթերի և էքսդրայի հաստ թուոց վրայ է։

ՀԱՆՔԱԾՈՒԽ

Գործողութիւնք կարի անշան են և տեղական փոքր վաճառմանց սահմանափակուած։ Գները անփոփոխ։ Հասաւ 4,000 թօնօ Նիւգասըլ։ Վաճառեցաւ 2,000 թօնօ։ Պատրաստ 12,000 թօնօ։

ԱՐՏԱԾՈՒԹԻՒՆ

ԹԻՖԹԻՔ.—Այս շաբթու իբր 398 հակ վաճառեցաւ, 80 հակ Նալլի խան 24, 24 հակ Կէրէտէ 24, 60 հակ Եսկի շէհիր ի գին 23½։ 110 հակ Էնկիւրիւ 23½։ 80 հակ Սիվրի Հիսար 23½, և 40 հակ ստորինք 7էն 16 ղրշ. օխան։ Պատրաստ 5,000 հակ։ Հրապարակը բաղդատմամբ հանդարտ էր այս շաբթու վաճառողաց ընդդիմանալուն պատճառաւ վասն գի աւելի լաւագոյն գներ կը պահանջէին։ Լիվերբուլի վաճառմունք 140 հակի կը հասնին 21—21½ բէնսի։

ԲՈՒՐԴ. —Վաճառեցաւ այս շաբթու իբր 30,000 օխայ գասապ պաշի առաջինը 7½—8¼։ Երկրորդը 5½—6¼։ Երրորդը 3½—4¼ ղրշ. օխան. նաև 15000 օխայ Քըրքմա ի գին 6¼—6½ ղրշ. օխան։

ՄԵՏԱՔՍ. —Վաճառեցաւ 2 հակ Նուխի Փրանք 39, 3 հակ Գազա 75 ղրշ. 14 հակ ՔԸՐՔ 75-50 ղրշ. 3 հակ Բումէլի 112 ղրշ. և 2 հակ Պրուսա ի գին 110 ղշ. 3 հակ Քալթալըս ի գին 108 ղրշ. 17 հակ Ռէշդ 32½ Փրանք օխան։ Պատրաստ 150 հակ։ Այս շաբթու հրապարակը հանդարտ էր թոյլ գներով։ Քօզանուի մետաքսները միշտ լաւ կերպով կը պահանջուին։

ԲԱՄԲԱԿ. —Կարեւոր գործ մը չկայ, գները հաստատ են, գի ապրանաց մասին Զմիւռնիայէն և Ատանայէն եկած լուրերը կը շարունակեն լաւ լինել։

ՔԷՆՏԻՐ.— Այս վաճառքը խիստ հանդարտ է. տեղական սպառման համար փոքր փոքր վաճառմունք կը լինին անփոփոխ գներով։

ԿԱՊԵՐՏ. —Այս շաբթու վաճառեցաւ 480 հատ հին Նամազի Գարապաղ և Շիրվան խառնուած Փրանք 22։ 332 հատ հին Շիրվան նամազի Փրանք 40—50։ 185 հատ նոր Շիրվան նամազի Փրանք 24։ 210 հատ զորք Գարապաղի Փրանք 29։ 30 հատ սէթճատէ 4½ ոսկի հատը։ Պատրաստ 6,500 հատ. Հրապարակը հանդարտ է, գնորդք փոքր են թուով բայց գները հաստատ։

ԱՖԻՈՆ. —Այս շաբթու վաճառեցաւ միայն 2 սնտուկ հին Նալլըխան ի գին 165 ղշ. օխան թէլքէլ։ Պատրաստ 110 կողով որոց 97 հին և 13 նոր կողով։ Հրապարակը անգոյն վիճակի մը մէջ է։ Պահանջը լաւ է բարձրագոյն գներով գնողներ կան հրապարակի վրայ առանց վաճառողի սակայն։

ՔԻԹՐԷ. —Վաճառեցաւ այս շաբթու 500 օխայ բանուած բնական ճերմակ Կեսարիոյ ի գին 22 ղրշ. օխան, 790 օխայ բանուած ճերմակ բնական Նիկտէի ի գին 21½։ 700 օխայ լաւ դեղին 17։ և 300 օխայ ստորին դեղին 13½—14 ղրշ. օխան։ Պատրաստ 19,000 օխայ։ Հրապարակը թոյլ է, պահանջի պակասութեան և բնականաբար գնորդաց նուազութեան պատճառաւ գները լքեալ են։

ՄԱՀՄՈՒԶԻԷ. —Այս շաբթու վաճառմունք տեղի չունեցան, գները հաստատ, պահանջը լաւ է։

ՍԱԼԷՊ. —Այս շաբթու վաճառմունք տեղի չունեցան։ Հրապարակը հանդարտ է, գները թոյլ են։

ՄԵՂՐԱՄՈՄ. —Վաճառմունք չէ եղած այս շաբթու։ Պատրաստ 1,300 օխայ։ Հրապարակը հանդարտ է։

ԿԱՂԻՆ.—Հրապարակը հանդարտ է, և գնորդաց թիւը կարի նուազ։ Գները թոյլ են։

ԾԷՀՐԻ. — Այս շաբթու վաճառեցաւ 18 պարկ Կեսարիոյ, ի գին 12¼ ղրշ. օխան։ Պատրաստ 700 պարկ։ Հրապարակը հաստատ է և գնողք կը գտնուին, բայց վաճառողք բարձրագոյն գներ կը խնդրեն, այսու հանդերձ պահանջը լաւ է։

ՄԱԶԻ.— Պատրաստ 230 պարկ որոց 80ը ճերմակ և 150 պարկը սեւ. հրապարակին վրայ գնորդներ կան, գները հաստատ են, և տեղական սպառման համար փոքր փոքր վաճառմունք ըլլալու վրայ են ի գին 7 ղշ. օխան։

ՄՈՐԹ. —Այս շաբթու մորթի վրայ հետեւեալ գործերը եղան։

ԿՈՎՈՒ ՄՈՐԹ.— Վաճառեցաւ 1,500 կտոր չոր Ասիոյ 9¾—10, և 600 կտոր Օտէսայի թաց մորթ ի գին 6 ղշ. օխան։

ԱՅԾԻ ՄՈՐԹ.—Այս շաբթու վաճառմունք չկայ թէև պատրաստ ալ ապրանք ունինք։

ՈՉԽԱՐԻ ՄՈՐԹ. —Յունիսի կտրուածքէն բաւական ապրանք կան, հրապարակը բաց, գնորդք կը պակսին։

ԱՅԾՈՒԿԻ ՄՈՐԹ. —40,000 կտորի չափ վաճառեցան այս շաբթու ստորին Ասիական ապրանք ի գին 14—16, և Ռումէլիի ապրանք խառն այծի մորթով 20 — 25 ղրշ. զոյգը ըստ տեսակին։

ԵՂՋԻՒՐ. —Այս շաբթու վաճառում չկայ։

ԸՆԹԱՑԻԿ ԳԻՆԵՐ

Ցորեն Կիրգա Ռուսիոյ	Լիպրոյ	57—58	Ղշ.	22 — 22½	Քիլէն
» » Դանուբի	»	57—59	»	—	»
» Կակուղ Կալաց և Պրայլա	»	57—58	»	20½— 22	»
» » Պուլղարիոյ	»	57—58	»	20— 21½	»
» » Բումէլի	»	58—59	»	19¼— 22¼	»
Եգիպտացորեն, Կալաց, Խոմայիլ և Օտէսա»			»	14¾—	»
» » Օրիոու և Տաճկական			»	14¼— 14½	»
Գարի կակուղ			»	12½—12¾	»
» հաստ			»	12 — 12¼	»
Ձաւտար			»	15 —	»
Քթանահունտ (քէթէն թօխումը)			»	25 — 23½	»
Գանար Եէմի			Փր	44 — 45	Օխայ
Նօխուտ Պալըքէսէր			»	40 — 45	»
» Աթէնք			»	40 — 55	»
Քէնտիրի հունտ			»	45 — 60	»
Պակլա			»	25 — 26	»
Սուսամ Մուտանիա Պալըքէսէր			»	105 —	»
» Մէրսին			»	110 —	»
Աֆիոնի հունտ			»	55 —	»
Լուբիա Օրտու			»	125 —135 100	»
» Դանուբ			»	135 —146 »	»
Օտէսա Ա. Ալիւր			Ղրշ.	124 — 128	Պարկը
» Բ. »			»	110 —116	»
» Գ. »			»	90 — 94	»
Ագիմա			»	92 — 96	»
Պրայլա տիգիկանի հետ խառնուած			»	83 —	»
Պրայլա			»	83 — 84	»
Վառնա			»	74 —	»
Շումէնտըֆէր			»	80 — 85	»
Խահվէ	Ղշ.	740—780—850	Օխ.	100	ոսկին
Լեզակ պէնկալ	»	80—110	»	»	»
» Քուրբայ	»	60— 80	»	»	»
Որդան կարմիր սեւ	»	18— 19	»	»	»
» կարմիր թուխ	»	15— 16	»	»	»
Պղպեղ	»	11¼	»	»	»
Կինամոն (դարչին)	»	5½— 6	»	»	»
Գարէնֆիլ	»	8—10	»	»	»
Թէյ սեւ ստորին	»	12— 16	»	»	»
Թէյ առաջին և լաւ	»	29— 88	»	»	»
Շաքար Հոլանտայ	»	155—168	կէնդինը	103	»
» Դրիէսթէ Ա. (պարկի մէջ)	»	160	»	»	»
» » Բ. (»)	»	156	»	»	»
» » Գ. (»)	»	142—148	»	»	»
Ծծումբ	»	34— 35	»	100	»
Խունկ (Գիւնլիւք)	»	220—240	»	»	»
Բրինձ Իտալիոյ Ա. Ռիզօն	Ֆրանք	47½—	Պարկը	»	»
» » Բ. »	»	47	»	»	»
» » Աւստրական	»	42	»	»	»
» » Բ. »	»	39	»	»	»
» » Գ. »	»	—	»	»	»
» Հնդկական	Ղրշ.	124—127—131	»	»	»
Գօլա Գաղղիական	»	3¾	Օխայ	»	»
» Անգղիական	»	164	Սնտուկը	»	»
Մոմ	Ղրշ.	7¾	Քիլօ	»	»
,, Գաղղիական	,,	94—		»	
Կաղ Ամերիկայի սնտուկ	»	29 —29½ և 35-36		»	
» Ռուսիոյ	»	30 —32	»	»	»
» » (վարիլի մէջ)	Փարայ	40—42	Օխայ	»	»
Ոգի Ռուսիոյ Օլատոֆքա 16 աստիճան	Օխայ	24—24¾		1	Ոսկոյ
» » Սոտինսքի	»	25½—26			»
» » Խարքով	»	27—			»
» Վար տեսակ Սէլանիկ եւայլն	»	29 — 38			»
Ռոմ Թրիէսթէ	կալլօն	18½—18¾			»
» Անգղիոյ		9—9¼			»
Անգղիական երկաթ (չուպուղ)		45			կէնդինարը
» Երկաթ (սէմէր)		45			»
Շուէտի » (չուպուղ)		78 —80			»
» » (սէմէր)		82			»
Տախտակ» (Սաճ) Թիւ 1— 4		63 —			»
» » » 5—10		70 —			»
» » » 11—14		80 —			»
Կլոր		90			»
Զէմպէր սովորական		59			»
» Մեծ դիրք		65 —67			»
Անագ (գալայ)		600—			»
Կապար (սաչմա)		112			»
» Տախտակ		120—			»
» Խողովակ		110—			»
Զէյք	Ղրշ.	127—132			Սնտուկը
Գարֆիցա 45 գիլօնոց	»	58— 62—			Վարիլը
Թէնէքէ	»	186—		2	Սնտուկը
Պղինձ	»	12 —12¼	Օխայ		»
Ճինկօ	Ֆրանք	70—		100	Օխայ
Համդածուխ Նիւգասըլ (ի վաճառատուն)		20 Շ. 0 Բ. —	Շ. 0 Բ.		Թօնօն
» » » (ծովու վրայ)		22 » 6 » —	» 6 »		»
» » Գարտիֆ (ի վաճառատուն)		22 » 0 »	23 » 0 »		»
»» (ծովու վրայ)		24 » 0 » —	25 » 0 »		»
» » Հարթըլբուլ		18 » 0 » —	19 » 0 »		«
Լիվէրբուլ		16 » 0 » —	17 » »		«
Մահօտի	Ղրշ.	6—6½	Լիպրան Ոսկի		»
Ամերիկան ամբողջ եարտա	»	4¾— 5½	»	»	»
» պակասաւոր	»	3½ —5¼	»	»	»
Ասթառցու (լօնկ գլօթ) լաւ տեսակն	»	4—4¾	»	»	»
» » » վաքր կայրա	»	5–	»	»	»
» » » Ներկուելու (գօտինքթն)	»	5⅜- 5½	»	»	»
Եէլքէն պէզի լաւ տեսակ	»	4⅜- 4½	»	»	»
» » երկրորդականք	»	4-4¼	»	»	»
Խամ ասթառ (չըրթինկ) լաւ տեսակ	»	48 — 50	Թօփը	»	»
» » » միջին »	»	50 — 60	»	»	»
» » » վար »	»	60 — 70	»	»	»
Մուլ 4 Թիւ (չափալը) 3 Թօփը (30-35-38 ինչ)	Ղրշ.	41¼—42	»		112
» 16 » (Թէնզիֆ) » » (·······)	»	38¼—39¼	»		»
» 26 » (Աքօչիա) » » (·······)	»	54½—	»		»
Մանած Պամբէր 4—14	Ղրշ.	36—38	փաքէթը	»	106
» » 18—28	»	45—48	»	»	»
» Էքսդրա (Ֆիլէժէնկ) 4—14	»	40—53½	»	»	»
» » (····) 18—28	»	48—59	»	»	»
» Էքսդրա գրօմիթօն 16—24	»	65—66	»	»	»
» Մավի 8—14	»	53—58	»	»	»
» » 20—24	»	67—70	»	»	»
» Կարմիր Իտալիոյ 4—14 լաւ	»	65—70	»	»	»
» » » »— երկրորդ	»	55—65	»	»	»
» » Զուիցերիոյ Թիւ 20	»	80—90	»	»	»
» » Իտալիոյ » »	»	65—70	»	»	»
Թիֆթիկ առաջին տեսակ	Ղշ.	24½—25	օխ.	100	ոսկի
» երկրորդ »	»	20½—23½	»	»	»
» ստորին »	»	6 — 16	»	»	»
» Վան	»	14 — 15	»	»	»
Բուրդ Քասապ պաշի Ա.	»	8 — 8½	»	»	»
» » » Բ.	»	6 —6½	»	»	»
» Քըրքմա Ա.	»	6¼ — 6½	»	»	»
» » Բ.	»	4 - 4½	»	»	»
Մետաքս Խօզանա	»	182 —205	»	»	»
» Նուխի	Ֆրանք	33 — 41	»	»	»
» Ռէշտ	»	26 — 34	»	»	»
Բամպակ Հալէպ	Ղշ.	6 —	»	»	»
» Ատանա	»	6¼—6½	»	»	»
» Իզմիր և շրջակայք	»	6¾— 7½	»	»	»
Աֆիօն Մալաթիա	»	230 — 245	»	»	»
» Սէլանիք	»	225 —	»	»	»
» Զիլէ Թօքաթ	»	210—	»	»	»
» Պալըքէսէր	»	195— 200	»	»	»
» Էնկիւրիւ	»	190 —	»	»	»
» Նալը խան Պէյ պազար	»	185	»	»	»
» Կէյվէ Պիլէճիք	»	170— 175	»	»	»
» Զըքընթը	»	110 —135	»	»	»
Քիթրէ առաջին ճերմակ	»	27 28	»	»	»
» աշխատուած ճերմակ	»	21 22	»	»	»
» լաւ բնական »	»	19 — 20	»	»	»
» սովորական »	»	18 — 19	»	»	»
» լաւ դեղին	»	15 — 16	»	»	»
» երկրորդ դեղին	»	12 13	»	»	»
» Զամուր	»	3 — 4	»	»	»
Սալէբ լաւ տեսակ	»	16- 16½	»	»	»
» երկրորդ տեսակ	»	14 — 16	»	»	»
Մահմուզիէ առաջին ճերմակ	»	220 —240	»	»	»
» երկրորդ	»	100 120	»	»	»
» երրորդ	»	60 — 80	»	»	»
Մեղրամոմ լաւ տեսակներ	»	20 23	»	»	»
» ստորին	»	19 — 20	»	»	»
Կաղին Տրապիզոն	»	110 —	կէնդինար	»	»
» Քէրասունի	»	109 —	»	»	»
Ծէհրի Եկին	»	12¼-12½	Օխայ	»	»
» Քայսար	»	12¼-12½	»	»	»
» Անկորա	»	11¼-11½	»	»	»
» Թօքաթ	»	10½-10¾	»	»	»
» Զօրում	»	10—10¼	»	»	»
» Վար տեսակներ	»	9 —9⅝	»	»	»
Եղջիւր	»	3½— 4		»	»
Մորթ գոմէշի չոր	»	9¼— 9½		»	»
» թաց	»	6¼—6½		»	»
» կովի չոր	»	9¼—9½		»	»
» թաց	»	6¼— 6½		»	»
» Ոչխարի	»	18 — 26		»	»
» Այծի	»	18 — 20		»	»
» Գառին	»	16 —18½		»	»
» Այծուկի	»	—		»	»
» Նապաստակի	»	—		»	»

20 ՖՐՆՔ. 95 ՂՇ.

ԺԱՄԱԳՈՐԾ

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ

ՄԱՀՄՈՒՏ-ՓԱՇԱՅԻ ԳԼՈՒԽ ԹԻՒ 244

95 ՂՇ. 20 ՖՐՆՔ.

Իւր արհեստական փորձառութիւնը գնահատող Արգոյ Հասարակութեան պատիւ ունի ծանուցանել թէ այս անգամ Բարիզու ամենէն նշանաւոր գործարաններէն միոյն մէջ պատրաստել տուած է նշանակեալ գնով նմանը ցարդ չտեսնուած կոթէն լարուող և խիստ ձեւաւոր ժամացոյցներ որոց 20 տարի կանոնաւոր բանիլն կերաշխաւորէ, եթէ տարին անգամ մը միայն իւղուուին։

Գաւառներէ եկած յանձնարարութիւնք փութով և ճշդութեամբ կը կատարուին։

ԻԼԱՆ

ԽԱԶԻՆԷԻ ԽԱՍՍԱՅԻ
ՇԱՀԱՆԷ

Երզադ անպարը իչուն ալընաճագ Մըօրը բիրինճի պէհէր չարշընպիհ վէ բաղար կիւնլէրի միւնագասա օլունաճաղընտան՝ խոթէք իսթէնլէրին էյամ մէզքիւրէտէ խազինէի խասսայի շահանէյէ կէլմէլէրի իլան օլունուր։

2 Թէմուզ 300 2—3

Յայտարարութիւն

Ձայնքաղ շարականը Ս. Երուսաղէմի Աթոռոյ տպարանէն վերստին ի լոյս ընծայուած ըլլալով՝ ի գին վեց ճերմա՛կ մէճիտի ամեն գրավաճառաց մօտ կը գտնուի։

Արտօնատէր, Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ